

87

31

ԱՄԱՏՈՒՆԻ

ԱԳԻՏԱՑԻԱՅԻ, ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ  
ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



Պ. Ե. Ս. Ա. Ն. Հ. Ր. Ս. Ա. Ր. Ա. Կ. Չ. ՈՒ Թ. Յ. ՈՒ Ն.  
ՅԵՐԵՎԱՆ, — 1929.

37

Ա-51

1 MAR 2010

37  
Ա-51

ԱՄԱՏՈՒՆԻ




12704

ԱԳԻՏԱՑԻԱՅԻ, ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ  
ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

NO. 5

~~12704~~  
31



45682km

Հր. № 970: Գրասեղվար № 2919 (ք. Տիրամ 2000.  
Պետհրատի ստաճին տղարան Վաղարշապատում.  
Վատվեր № 73:



3208 9/

### ԱՌԱՋՍԲԱՆ

Այս բրոշյուրը հանդիսանում է իդեոլոգիական նակատի աշխատողների ժողովում կարդացված զեկուցումը՝ վերամշակված յեվ վորոչ չափով հարմարեցված տպագրության համար:

Յես այդ զեկուցման մեջ չես դրել կազմակերպության մեջ յերկար ժամանակ վիճելի յեղած «մեծ» հարցեր, ինչպիսին է դաշնակցության մասին յեղած վեճը յեվ այլն: Իմ խնդիրս ուրիշ է յեղել, այն է՝ ուրվագծել մեր ագիտացիայի յեվ պրոպագանդայի կոնկրետ խնդիրները (յեվ այն ել նրանցից ամենակարեվորները, ամենահրատապները) նրանց իրական փոխադարձ կապակցության յեվ կախման մեջ, նշել, ինչպես ասում են, ընդհանուր մեթոդոլոգիական մոտեցում այդ խնդիրների լուծման ասպարիզում: Առավել յեվս այդ անհրաժեշտ եր այն պատճառով, վոր յերբ մեր կազմակերպությունն արդեն ճիշտ կերպով կողմնորոշված է ընդհանուր-քաղաքական խնդիրների նկատմամբ, յեվ նա ճիշտ գիտակցում է առաջվա դեկավարության սխալները, մեզ անհրաժեշտ է կենտրոնանալ այդ սխալների գործնական հետեվանքները վերացնելու գործին: Իսկ այդ սխալների հետեվանքները՝ մեր ագիտ-պրոպ աշխատանքների բնագավառում, քացառիկ նշանակություն են ունեցել: Այդ սխալները հասցրել են առանձին ողակների բայբայմանը մի կողմից, հեռանկարների կորուստին՝ մյուս կողմից յեվ կատարյալ խեղաթյուրման ու թերման դեպի

«կուլտուրականութուն»՝ յերրորդ կողմից: Անհրաժեշտ  
ե լուրջ բեկում, իսկ այդ կարելի չե անել միայն այն  
ժամանակ, յերբ ձեռք ե բերված **Գպատակագրության**  
**պարզութուն**, յերբ ձեռք ե բերված նպատակի միաս-  
նականութուն: Բրոշյուրն իրեն նպատակ ե դնում  
պարզել այդ բնագավառում կատարվող աշխատանքի  
բարելավման հիմնական ուղիները:

Բրոշյուրը մի շարք տեխնիկական պատճառների  
շնորհիվ ուշ ե լույս տեսնում: Այս բրոշյուրը գրելուց  
հետո տեղի ունեցավ Հայաստանի Կոմկուսակցու-  
թյան VI համագումարը, վորը ամենալուրջ ետապ-  
ներից մեկն ե հանդիսանում մեր կազմակերպության  
պատմության մեջ: Գործնական աշխատանքի մեջ  
մենք արդեն հասել ենք անհրաժեշտ բեկման, անգրա-  
գիտության վերացման յեվ գիտական հասարակայնու-  
թյան գործը մեռյալ կետից արդեն դուրս ե բերված: Վեր-  
ջին ժամանակներս աջ թեքման դեմ տարվող սուր պայ-  
քարը պահանջում ե մեզնից գորահավաքի յենթարկել  
մեր ամբողջ ուժերը, վորպեսզի ավելի հստակ կեր-  
պով պարզենք թե՛ կուսակցական յեվ թե՛ անկուսակ-  
ցական աշխատավոր մասսաների համար մեր կուսակ-  
ցության գլխավոր զիծը յեվ այդ զիծը կենսագործե-  
լու յեղանակները:

Ընթացիկ խնդիրն ե՝ ուժեղացրած պայքար ընդ-  
դեմ աշխուժացող բուրժուաչական իդեոլոգիայի, իր  
բոլոր ձեվերով, մեր յերկրում յեվ ամեն տեսակ թե-  
քումների, մանավանդ աջ թեքման դեմ կուսակցու-  
թյան մեջ: Հենց այդ կենտրոնական մարտական  
խնդրի շուրջն ել պետք ե կառուցվի մեր ամբողջ աշ-  
խատանքը:

Հեղինակ.

«Ինդուստրիացման ներշնչանք տեմպը թելադրողը  
արտաքին ե ներքին ամբողջ կացութունը ե  
մեր յերկրի համար կապիտալիստական յերկրներին  
տնտեսապես հասնելու, իսկ ապա նաև նրանցից  
առաջ անցնելու անհրաժեշտութունն ե: ԻճճՈՒՍ-  
ԻԿԱԳՄԱՆ ՏԵՄԱԿԻ ԲՈՒՂԱԳՈՒՄԸ ԳՆԵԿԱ ՍԱՅՄԱՏ-  
ԳՆԵՐՈՒՄ ԿՑԵԱԳԱԿԵՐ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՎԵՐԱՓՈՒԽՈՒՄԸ ՎԻՑԵԳՆԵԼՈՒ ՍԱՅԱՌՈՒՄԻՑ:

... Աջ թեքումն այն տենդենցն ե, վոր ձգտում  
ե ինդուստրիացման տեմպը կոծկել, ձեկել դա-  
սակարգային պայքարը՝ մանավանդ գլուղում,  
վորը ժխտում ե կոլեկտիվացման ե խորհրդա-  
յին տնտեսութունների շինարարութունը լայն  
կերպով ծավալելու անհրաժեշտութունը ե թե-  
քանահատում բյուրոկրատիզմի ու պատերազմի  
վտանգի դեմ մղվող պայքարը»:

(Մոսկվայի կազմակերպության կուսակցի ընդհանուր  
ընկ. Մոլոտովի զեկուցման առթիվ Համ. Կոմ. Կուսի  
Կենտկոմի նոյեմբերյան պլենումի արդյունքների մասին):

\*  
\*  
\*

Մենք ապրում ենք մեր հեղափոխության հափա-  
զանց պատասխանատու մի շրջան:

Մեր հսկայական հաջողութուններին ուղեկցում  
են ահագին դժվարութուններ, վորոնք վորոշ հափով  
առաջ են գալիս հենց մեր հարձակողական քաղաքա-  
կանության շնորհիվ:

Յեթե մտածելու լինելինք միայն այսօրվա մա-  
սին, առանց յերկրի սոցիալիստական վերակառուցման

խնդիրը դնելու, կարող կլինեյինք այսօր և յեթ, հենց մոտակա որերում աշխատավորներին ավելի ձեռնառու նշուժական պայմանների մեջ դնել:

Մեր չերկրում կարելի չե սոցիալիզմի շինարարութունից հրաժարվելու գնով հսկայական միջոցներ չգնել չերկրի ինդուստրիացման մեջ, այլ պատուելով արտաքին առևտրի շղթան, դարգացնել թեթև արդյունաբերութունը և այդպիսով դառնալ կապիտալիստական աշխարհի տնտեսական կցորդ, առժամանակ «լավացնել» մասսաների դրութունը: Բայց այդ կնշանակեր նեպիշրջանակների ընդլայնում, մեր չերկրում կապիտալի ավելի մեծ ազատութուն, չերկրի դարգացում վնչ թե դեպի սոցիալիզմ, այլ կապիտալիզմի բուռն աճում, ուրեմն և պրոլետարիատի զիկտատուրայի անկում:

**Պրոլետարական կուսակցությունը, պրոլետարական պետությունը մի՞տե յեքթակել են պրոլետարիատի յեվ աշխատավոր մասսաների ընթացիկ ցահերը ցրա ավելի քեվական ցահերին:**

Մեր Միութչան պրոլետարիատն ու աշխատավոր գյուղացիութունը, վորոնք մի անգամ տապալել են կապիտալի և կալվածատերերի իշխանութունը, չեն ուզենա այլևս ինչ գնով ել ուզում ե լինի վերադարձնել հին կարգերը: Ուստի նրանք, հակառակ բոլոր դժվարութուններին, ամուր և անշեղ կերպով կգնան չերկրի սոցիալիստական վերակառուցման ճանապարհով, համառ կերպով կհաղթահարեն բոլոր և ամեն տեսակի դժվարութուններ:

\*  
\*~

Այլ դժվարութունները, վորոնք բնորոշվում են

ինչպես մեր տնտեսութչան խայտարղետ կառուցվածքով (սկսած տոնական քոչվոր ցեղերից մինչև բարձր ինդուստրիան), ուր կապիտալիզմը դեռ հարուստ ասպարեզ ունի իր դարգացման համար, այնպես և նրանով, վոր սոցիալիզմի շինարարութչունը տեղի չե ունենում մի չերկրում, վորը միակն ե ամբողջ մնացած կապիտալիստական աշխարհի առաջ, կրկնապատկվում են հավելյալ դժվարութչուններով, վորոնք առաջ են գալիս շնորհիվ քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի կատաղի դիմադրութչան, տարրեր, վորոնք դուրս են մղվում չերկրի սոցիալիստական վերակառուցման պրոցեսում:

Բայց այդ դժվարութչունները, վորոնք բնորոշ են կապիտալիզմից դեպի սոցիալիզմ ընկնող անցման շրջանի (և մանավանդ այդ անցման վերակառուցման ետապի), վորոնք անխուսափելի չեն իՍՄ-ի բոլոր շրջանների համար, առանձին ուժ են ստանում Հայաստանում, ուր ընդհանուր դժվարութչուններին միանում են նաև զուտ տեղական բնույթ կրող դժվարութչուններ:

Այս վերջինները բնորոշվում են ինչպես չերկրի կուլտուրական և տնտեսական չափազանց հետամնացութչամբ (պրոլետարիատի աննշան խավ), այնպես և հնից մնացած ուրուլն ժառանգութչամբ ու չերկրում չեղած հակախորհրդային տարրերով, վորոնք հենվում են վոչ միայն ներքին, նրանց մոտիկ սոցիալական խավերի վրա, այլ վորոշ չափով հանդիսանում են անբողջ հայկական բուրժուազիայի արտահայտիչը:

Սոցիալիստական շինարարութչան ծավալման ընթացքում առաջ չեկած դժվարութչունները միշտ ել առաջ են բերել տատանումներ գյուղացիութչան, պրո-

լիտարիատի վորոշ շերտերում և կուսակցութեան անկաշուն ողակներում:

Տրոցկիստական ոպոզիցիան, իսկ դրանից առաջ ել «ձախ կոմունիստները», արտահայտում ելին հենց այդ խուճապը դժվարութունների առաջ. հիվանդագին կերպով չափազանցելով այդ դժվարութունները և չհասկանալով սոցիալիզմի դժվար ճանապարհը, նրանք նախագուշակում ելին ԽՍՀՄ-ի կործանումը, նրա բուրժուալիան վերասերումը: Նրանք պահանջում ելին արխի «հեղափոխական» միջոցներ և ելապես արտահայտում ելին կատարելա թերահավատութուն դեպի մեր հեղափոխութեան ուժերը, և շնորհիվ դրան թավալվում դեպի մենշևիկյան ճահիճը, դեպի անկհայտ լիկվիդատորութուն:

Ըստ ելութեան նուշնն ե արտահայտում նաև վերջերս յերևան յեկած ալ ոպորտունիստական թեքումը: Այդ թեքման կողմնակիցները յեղած դժվարութունների հանդեպ առաջ են քաշում ինդուստրացման տեմպը վոլորելու (свертывать) ծրագիրը, բացասում են կոլեկտիվացման և խորհրային տնտեսութունների շինարարութունը ծավալելու անհրաժեշտութունը գլուղում, պնդելով գլուղատնտեսութեան «դեգրադացիայի» սխալ ըմբռնումը, հարկադրում են անհատական տնտեսութունը (շեշտը սրա վրա դնելով) կոլեկտիվ տնտեսութեան, վախենում են ինքնաքննադատութունը ծավալելուց և այլն: Ընդհանրապես, պահանջելով սոցիալիստական շինարարութեան թափի թուլացումը, բացահայտ կերպով զիջումներ են կատարում յերկրի կապիտալիստական, մանավանդ կուլակային տարրերին, վորպեսզի ծեփեն դասակարգային պայքա-

րը: Իրանով իսկ նրանք կուսակցութունը հետ են քաշում բայլչեիզմի մարտական դիրքերից:

Խոսելով մասնավորապես Հայաստանի մասին, մենք պետք ե արձանագրենք նուշն պրոցեսները կուսակցութեան շարքերում: Մի կողմ թողնելով տրոցկիզմը, վորը համարյա վոշնչով շեր տարբերվում թե բովանդակութեան, թե ձևի և թե պայքարի սրութեան տեսակետից ԽՍՀՄ-ի մլուս բայոններում ունեցած արտահայտման իր յեղանակներից. ալ թեքումը մեզանում ընդունել ե մի փոքր այլ ձևեր՝ նախ նրանով, վոր նա մեզանում մի փոքր ավելի շուտ ե յերևան յեկել և յերկրորդ նրանով. վոր նա գգալի կշիռ ե ունեցել Հայաստանի կոմկուսակցութեան կենտկոմի նախկին ղեկավարութեան գործունեյութեան մեջ:

Վճռական պայքարի բացակայութունը տրոցկիզմի դեմ (մանավանդ առաջին շրջանում), վճռական պայքարի բացակայութունը թշնամի իդեոլոգիաների՝ նացիոնալիզմի, դաշնակիզմի դեմ, դասակարգային պայքարը գլուղում ծեփելը և իրրև դրանց հետևանք մեր կազմակերպութունների հատակ դասակարգային գծի բացակայութունը, հատուկ կուսակցական գծի բացակայութունը կուլտուրական շինարարութեան հարցերում, վորն իրեն նպատակ ե դնում մասսաները վերադաստիարակելու անհաշտ ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական շինարարութեան գործի մեջ ներգրավելու վողով, գործնականում առաջացրին մի շարք քաղաքական սխալներ աշխատանքի բոլոր բնագավառներում:

Այդ ղեկավարութունն անընդունակ դուրս յեկավ հասկանալու յերկրի սոցիալ-դասակարգային փոփո-

խությունները, չերկրի տնտեսական աճման հետ միասին կուլակային ելեմենտների աճումը և քաղաքականապես աշխուժանալը, նացիոնալիստական ինտելիգենցիայի, դաշնակիների և կրոնական ագիտացիայի աշխուժացումը, այդ տրամադրությունները խորհրդային և տնտեսական ապարատի մեջ և աշխատավորների շարքերը թափանցելը: Այս բոլորը վոչ մի անհանգստություն չէր պատճառում նախկին ղեկավարութանը, վորն ընդունել էր այդ բոլոր չերևույթները ծեփելու, ամենքի և ամեն ինչի հետ խաղաղ կենակցելու, խաղաղ կերպով «սոցիալիզմի մեջ ներաճելու» գիծը:

Բավական չէ, վոր այդ ղեկավարությունն ուժեղ պայքար չի մղել նացիոնալիզմ-դաշնակիզմի դեմ, այլև ինքը վորոշ չափով տուրք է տալիս բուրժուազական ինտելիգենցիային:

Հայաստանի կոմկուսակցության IV պլենումը տնտեսական շինարարության ասպարիզում հայտնաբերեց տեղի ունեցած ազգային դեմոկրատական ձգտումներ և մի շարք խոշոր քաղաքական սխալներ իդեոլոգիական պայքարի գծով, վորը ցույց է տալիս, թե նախկին ղեկավարության կողմից հաշվի չի առնվել մեր պայքարի և շինարարության ամբողջ ուսուցանանքները, ըստ կուլթյան **ապացուցեց**, վոր նախկին ղեկավարությունն ունեցել է ազգայնական—աջ թեքում, մի թեքում վոր չէր կարող չարտահայտվել և արտահայտվեց մեր աշխատանքի բոլոր բնագավառներում, ի թիվս վորի նաև կուլտուրական շինարարության բնագավառում:

Ահա թե ինչու, չերը խոսում ենք ագիտացիայի,

պրոպագանդայի և կուլտուրական շինարարության հերթական խնդիրների մասին, միանգամայն ավելորդ չէ, այլ անհրաժեշտ է շեշտը դնել մեր աշխատանքի սկզբբունքային հիմքերի վրա, չերևան հանել այն սկզբունքայինը, վոր բնորոշում է մեր ազգացության, մասսաների վերադաստիարակման և դաստիարակության մեր բոլոր միջոցների բովանդակությունն ու նպատակադրումը և այդպիսով տալ մեր ամբողջ աշխատանքի հիմնական գիծը, հիմնական կրիտերիումը: Այդ անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, վոր ազատվելով կենտկոմի ղեկավարության մեջ լեղած աջ տարրերից, մենք բոլորովին **չե՞նք վերացրել աջ թեքում** և մեր աշխատանքի բազմաթիվ բնագավառներում արտահայտվող տուճին աջ տրամադրությունների տակ լեղած **ոբյեկտիվ հողը**:

Միանգամայն իրավացի չե ընկ. Ստալինը, վորը նույնմբերյան պլենումում նշեց, վոր աջ թեքման ուժն աճման մեջ է, վոր աջ թեքումը կուժեղանա և կամրապնդվի նոր դժվարությունների առկայությամբ:

# I. ՅԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄ

Կուլտուրականությունը, գիտությունը, գրագիտությունը, գեղարվեստը ինքնանպատակ չէ, այլ սոցիալիզմի համար պայքարելու միջոց:

Մեր ամբողջ կուլտուրական շինարարության, մեր ագիտացիայի և պրոպագանդայի միակ նպատակն է մասսաները ներգրավել դեպի սոցիալիստական շինաբարություն, մասսաներին սովորեցնել անցման շրջանի դժվարությունների դեմ պայքարելը, նրանց վերջնականապես ազատել պրոլետարիատին խորթ ազդեցություններից:

Այդ նպատակին մենք հասնում ենք, մեր ամբողջ աշխատանքը յենթարկելով հեղափոխության կոնկրետ խնդիրներին նրա զարգացման այս կամ այն աստիճանի վրա: Մեր ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի բովանդակությունը չեմ մեր կուլտուրական շինարարության ուղղությունը կանխորոշվում ե՞ն այն խնդիրների ամբողջությամբ, վոր մեր առաջ հարուցում է հեղափոխությունը իր զարգացման օվյալ աստիճանում:

Հետևաբար, ագիտացիայի և պրոպագանդայի և ամբողջ կուլտուրական շինարարության հիմնական դրույթները բնորոշելու համար մենք պարտավոր ենք հաշվի առնել խնդիրների այն շարանը, վոր հեղափո-

խության օվյալ ետապում հանդիսանում է հիմնականը:

Տվյալ եպոխային առաջադրվող հիմնական խնդիրները բնորոշվում են մեր չերկրի ինդուստրիացման արագ շեմայի, գյուղատնտեսության կոլեկտիվացման, նոր հսկա գործարանների կառուցման, մեր մետաղագործական, ածխի, նավթի արդյունարերության բարձրացման, և սրա հետ միաժամանակ, գյուղացիական տնտեսության արտադրականությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

Այս բոլոր հսկայական հարցերը՝ ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մասնավոր-կապիտալիստական հատվածի վրա վճռական հարձակում գործելու խնդիրները—մեր առաջ ամբողջ հասակով դնում են կուլտուրական հեղափոխության հարցը:

Կուլտուրական հեղափոխության խնդիրը դրվում է իբրև յառօրյա գործնական խնդիր, վորովհետև առանց աշխատավորների ամենալայն մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու, մենք չենք կարող հաջողությամբ վերջացնել մասնավոր-կապիտալիստական հատվածի վրա կատարվող մեր հարձակումը:

Յեթե խնդրին մոտենալու լինենք բյուրոկրատիկ ձևով, զուտ ձևականորեն և չերկրի ինդուստրիացումն ու կոլեկտիվացումը պատկերացնենք իբրև պետության կողմից վորոշ քանակությամբ նյութական միջոցների հատկացում և ճարտարագիտական տեխնիկական ուժերի մասնակցություն, այն ժամանակ, իհարկե, դժվար կլինի հասկանալ կուլտուրական հեղափոխության նշանակությունն ու իմաստը, այն ժամանակ, իհարկե, «լավ» տնտեսավարի համար՝ խրճիթ-ընթերցարանի,

անգրագիտութունը վերացնելու համար ծախսված փողերը կտրած փող կլինեն:

Իսկ չեթե ցույց տանք կուսակցական մոտեցում և ունենանք դասակարգային պարզ ու հստակ մոտեցում, ապա դժվար չե չեղիքի ինդուստրիացման մեջ չե-րևան բերել գասակարգային պայքարի մի նեվ, պրո-լետարիատի դասակարգային հարձակման մի չեղանակ մասնավոր-կապիտալիստական հատվածի վրա: Մի-անգամայն հասկանալի չե, վոր աշխատավորների շար-քերի համապատասխան վերակազման խնդիրը, բանվոր-ների և գյուղացիների մորթիլիցայիան չեղիքի ինդուս-տրիացման ընդհանուր լոզունգի ներքո, հանդիսանում են որվա ամենակարևոր խնդիրները: Այս կապակցու-թյամբ կուլտուրական հեղափոխութունը մեզ համար համապատասխան կոնկրետ իմաստ ե ստանում:

Մեր աշխատանքը գյուղում, պաշքարը կոլտըն-տեսութունների համար, պաշքար դասակարգային ճիշտ գծի, հենց այժմ ել մի շարք փաստեր են մատա-կարարում այն մասին, վոր մեր չքավորը, մեր բատ-րակը հաճախ խարված են դուրս գալիս՝ չեբեմն կու-լակի պոչն են հանդիսանում: Այդ առաջ ե գալիս այն պատճառով, վոր վորոշ դեպքերում մեր ձեռնարկումե-րը վիժում են շնորհիվ նրան, վոր մենք չեբեմն չենք կարողանում իր ժամանակին ներգրավել չքավորու-թյան, բատրակների և միջակների հսկայական մաս-սան, չենք կարողանում նրանց համապատասխան ձե-վով կողմնորոշել և նախապատրաստել նրանց կուլակի դեմ տնտեսական և քաղաքական պաշքար մղելու հա-մար:

Բատրակության կենցաղը լավացնելու, նրա աշ-

խտանքը պաշտպանելու համար մղվող պաշքարը հա-ճախ հինց դեմ ե առնում անկուլտուրականության հարցին: Հաճախ մեր կոլտնտեսութունների քայքա-յումը վոչ պակաս չափով բացատրվում են փորձված կոլտնտեսների բացակայությամբ, կոլտնտեսութուննե-րում աշխատողների կուլտուրական ցածր մակարդա-կով: Կարելի չե հարչուրավոր, հազարավոր որինակ-ներ բերել այն մասին, վոր մեր հստակ դասակարգային դիժը գյուղում, ինչպես և քաղաքում, շատ հաճախ խեղաթյուրվում ե պատրաստված դեկավարների բա-վականաչափ կադրերի բացակայության շնորհիվ:

Մասնավոր-կապիտալիստական հատվածի վրա վճռական հարձակման անցնելու եպոխտում, մենք չենք կարող առաջ շարժվել առանց կուլտուրական հեղափոխության հարցի գոնե նախնական լուծման: Չենք կարող առաջ շարժվել քանի դեռ չենք բարձ-րացրել աշխատավորների լայն մասսաների կուլտու-րական զարգացման մակարդակը միքանի աստիճան ավելի վեր, քան թե այժմ ե:

Այսպիսով, ժխտելով բյուրոկրատիկ մոտեցումը մեր չեղիքի սոցիալիստական շինարարության հարցե-րին, ժխտելով չինովիստիկական մոտեցումը ինդուստրիաց-ման և սոցիալիստական վերակառուցմանը, այդ հար-ցերի մեջ նշելով դասակարգային մարտերի մի հսկա-յական ձև, մենք այդ կոնկրետ կապակցությամբ ել հենց դնում ենք թե ագիտացիայի և պրոպագանդայի խըն-դիրները և թե ամբողջ կուլտուրական շինարարության խնդիրը:

Ահա հիմնականում մեր դրույթը, վորը հիմնված ե մասսաները ներգրավելու սոցիալիստական շինարա-

բութչան մեջ, դասակարգալին մարտի նոր ձևին ակ-  
տիվ կերպով մասնակից դարձնելու համար:

### ԱՅԺՄՅԱՆ ԵՏԱՊԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սակայն հենց նոր մեր կողմից այդպիսի ընդհա-  
նուր ձևով բնորոշված խնդիրը դեռ բավական չէ: Այդ  
բնորոշումը մեզ տալիս է մեր աշխատանքի միայն  
հիմնական շրջանակները պրոլետարիատի դեկտատու-  
րայի ամբողջ ժամանակաշրջանի, կապիտալիզմից դե-  
պի սոցիալիզմ լեղած ամբողջ անցման շրջանի համար:  
Սակայն մեր աշխատանքը կոնկրետ ձևով մենք կա-  
րող ենք կառուցել միայն այն ժամանակ, չերբ այդ  
ընդհանուր խնդիր-դրույթը մենք կկարողանանք քըն-  
նել հեղափոխության ամեն մի ետապի կոնկրետ ա-  
ռանձնահատկություններում և չերբեք և վոչ մի դեպ-  
քում աչքաթող չանելով ընդհանուր դիրքավորումը:

Ներկա ետապի առանձնահատկությունները կամ,  
ուրիշ կերպ ասած, այն բնորոշ գծերն ու առանձ-  
նահատուկ պայմանները, վորոնց մեջ մենք ապրում  
ենք և վորոնց մեջ այդ խնդիրը պետք կլինի լուծել,  
բնորոշվում են հետևյալ հիմնական մոմենտներով՝

ա) Տարեցտարի ավելի և ավելի չեն ամրանում  
սոցիալիզմի դիրքերը մեր չերկրում: Կուսակցության  
կողմից մատնանշված ինդուստրիացման գործի ունալ  
իրականացումը փոխում է մեր չերկրի դեմքը: Ճիշտ  
այնպես, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ-ում, Հայաստանում  
ևս կառուցված են նոր գործարաններ և ֆարրիկաներ,  
վերականգնված են և ընդարձակվում են հները, Խա-  
ուցված են և կառուցվում են ուժեղ հիդրո-կայան-  
ներ, շինված են և շինվում են վոտոգոլ ջրանցքներ:

Շնորհիվ գյուղատնտեսությունը ցույց տրվող չեռան-  
դուն աջակցության, գյուղատնտեսության աշխատան-  
քի արտագրողականությունը և ընդհանուր արտա-  
դրանքն անց է կացել նախապատերազմյան մակար-  
դակից: Բայց մենք վոչ միայն պարզապես կառուցում  
ենք, վոչ թե պարզապես բարձրացնում ենք տնտեսու-  
թյունը, այլ կառուցում ենք այն սոցիալիստական ու-  
ղիով, այդ աճումը կազմակերպում ենք բոլորովին նոր  
տիպով: Ել չխոսելով այն մասին, վոր աճող արդյու-  
նաբերությունն ամբողջովին սոցիալիստական է, և  
հետևաբար նրա հսկայական աճումը նշանակում է մաս-  
նավորի համարյա կատարյալ վերացումը արդյունա-  
բերական արտադրության ասպարիզից (մասնավորն  
այդ ասպարիզում շատ աննշան դիրք է գրավում),  
շրջանառության ասպարիզում մասնավոր կապիտալը,  
մանավանդ վերջին տնտեսական տարում, զգալի չա-  
փով դուրս է մղվել կոոպերացիայի ու պետական առե-  
տրի կողմից, իսկ գյուղատնտեսական արտադրության  
ասպարիզում խորհրդային տնտեսությունների և տըն-  
տեսության կոոպերատիվ ձևերի, մանավանդ կոլտըն-  
տեսությունների, ուժեղ զարգացումը լուրջ հարված է  
հանդիսանում կուլակային տնտեսության վերաբեր-  
մամբ և կանխորոշում չքավորական և միջակ տնտե-  
սությունների առաջիկա զարգացումը:

Այդպիսով, բոլոր գծերով մենք ունենք սոցիա-  
լիզմի աճումը՝ չերկրի սոցիալիստական վերակառուց-  
ման բարձր տեմպ, վորը հիմա արդեն վորակով տար-  
բեր է 23—26 թվականից:

Սոցիալիզմի տնտեսական նախադրյալների աճ-  
ման և ամրացման այդ պրոցեսին ուղեկցում է պրո-

51

3208 179

լետարիատի և նրա ու գյուղի միջև չեղած շաղկապի աճումը և ամրացումը: Եյապես լավանում են պրոլետարիատի, ինչպես և գյուղական չքավորութեան նյութական և կենցաղային պայմանները, բարձրանում և նրանց ակտիվութունը և կուլտուրական-քաղաքական աճումը:

բ) Սակայն լեթե պրոլետարիատը, ագրեսիվ դիրք ընդունելով մեր չեղրի կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, ուժեղացնում և ամրացնում է սոցիալիզմի հարձակողական շարժումը, ապա բուրժուազիան լուելլայն չի նահանջում: Նախ, բացարձակապես բուրժուազիան նույնիսկ աճել է, մանավանդ գյուղական կուլակը: Այդ դրութունը Հայաստանի պայմաններում, ուր չեղել են կուսակցական գծի խեղաթուրումներ, ավելի ևս եյական է: Ել չենք խոսում կուլակութեան մասին, վորը վերջին շրջանում ավելի պայմաններ է ունեցել իր ուժերն ամրացնելու: Առևտրական բուրժուազիան դուրս մղվելով խոշոր առևտրի ասպարիզից, ավելի և ավելի դառնում է սպեկուլյատիվ տարր: Նա ճարպկորեն ոգտագործում է մեր պարենավորման դժվարութունները և նվաճում իր գոյութեան համար ժամանակավոր պայմաններ:

Յերկրորդ, բուրժուազիան (թե քաղաքի և թե գյուղական կուլակը), նահանջում է, բնականաբար, վոչ առանց կուլի: Մեր բոլոր սոցիալիստական ձեռնարկումներին նրանք կատաղի դիմադրութուն են ցուց տալիս:

Ձե՞ վոր, լեթե Նեպո առաջին ցվագ կարող էր բուրժուազիայից հուլս սալ, թե հնարավոր է, թե կուլ պեճական հսկողութեանց սակ, պահպանել կա-

պիսալիստական ճահագործման վորո՞ աղբուրներ, ապա Նեպո այժմյան եճապք, բանի գնում, այնքան ավելի վոչ մի կասկած չի թողնում, վոր նա այնպիսի մի բաղաբակաբուրյուն է, վորը հիմնված է կապիսալիստական ճարրերը վերջնակաճապես դուրս մղելու, այս անգամ կապիսալիզմի հեճց առմասները վոչնչացնելու վրա:

Հենց այն ժամանակ, չերը սոցիալիզմը խոր արմատներ է գցում, չերը բուրժուազիան սկսում է կորցնել իր նենակետերը, մենք վկա չենք դառնում չերկրի բոլոր բուրժուազական տարրերի ակտիվացման՝ դասակարգային պայքարի սրման իրողութեանը:

Գյուղի կուլակային տարրերը համառ պայքար են մղում խորհրդային իշխանութեան ձեռք առած բոլոր միջոցների դեմ: Նրանք մեթոդների մեջ խտրութուն չեն դնում, դիմում են անգամ գինու ոգնութեան՝ մոլորեցնելու նպատակով, խաբում զանազան խոստումներով, կոլտատեսութունների մեջ են ներսողոսկում հազար ու մի միջոցներով նրանց վարկաբեկելու համար, ջանում են աղավաղել մեր աշխատանքների բոլոր ձևերն իրենց ոգտին ոգտագործելու նպատակներով, տանում են մինչև անգամ ակնհայտ կուլակային ագիտացիա խորհրդային իշխանութեան դեմ, ահաբեկման չենթարկում խորհրդային հասարակայնութեան գործիչներին՝ գյուղթղթակիցներին ու մեր գյուղական ակտիվի մշուս ներկայացուցիչներին և դիմում այլ միջոցների, վարելով հետևողական դասակարգային պայքար: Վոչ վոքի համար այժմ գաղտնիք չէ, վոր գյուղական շինարարութեան բոլոր ասպարեզներում սուր դասակարգային պայքար է տե-

դի ունենում, չերբեմն նուրբ ձևերով: Նույնը մի փոքր այլ ձևերով մենք ունենք նաև քաղաքում:

4) Այդ պալքարն իր արտացոլումն է գտնում իր գեոլոգիական վերնաշենքի բոլոր բնագավառներում:

1. Ավելի սուր տատանումներ են նշվել ինտելիգենցիայի շարքերում: Այդ ինտելիգենցիայի մի մասն ավելի պարզ և անկեղծ կերպով և սկսել արտահայտել արդի մեր բուրժուազիայի սպասելիքներն ու պահանջները:

2. Հիմնական հասարակական գիտությունների մեջ, թե եկոնոմիկայի և թե փիլիսոփայությունն ենագավառում, բուրժուազական գիտնականներն ավելի ակտիվ դիրքեր են գրավել մարքսիզմի հանդեպ:

Տնտեսական խնդիրների շուրջը գրված կան մի շարք աշխատություններ, վորոնք պահանջում են ինդուստրիացման տեմպը թուլացնել, թույլ տալ հողի մասնավոր սեփականություն, այն է՝ հողի առուծախ, բանվորների աշխատավարձի իջեցում, Նեպի շրջանակներին ընդլայնում և այլ կուլակային պահանջներ:

Փիլիսոփայությունն ենագավառում վերածնվում են Մարքս-Ենգելսին վերանայելու տերտերական-իդեալիստական փորձերը:

Գեղարվեստի և գեղարվեստական գրականության բնագավառում մենք ունենք բուրժուազական էստետիզմի և ազգային-ուժմանտիկական չեղանակների վառ որինակներ:

Առհասարակ բոլոր ուղղություններով մենք նկատում ենք հակախորհրդային ագիտացիայի ուժեղացում, կրոնական աղանդների և նացիոնալիզմի աշխուժացում:

Իսկ այդ բոլոր արամագրություններն այս կամ այն ձևով իրենց արտացոլումն են գտնում թե խորհրդային և տնտեսական ապարատի մեջ և թե դպրոցում:

Այս բոլոր ասպարեզներում սուր պալքարը պետք է բացատրել վոչ միայն տնտեսական պալքարի արտացոլմամբ, այլ և նրանով, վոր պրոլետարիատը վճռական միջոցներ է ձեռք առնում բուրժուազիայի գաղափարախոսներին գիտությունն բոլոր բնագավառներից դուրս մղելու համար, այդ չափազանց պատասխանատու բնագավառում նույնպես իշխող բարձունքները գրավելու համար: Իսկ այդ հարկավոր է: Առանց այդ յուրա գնալ չի լինի, վորովհետև չեղկրի սոցիալիստական վերակառուցումը պահանջում է ավելի շատ աշխատանք, ավելի մեծ ծառայություններ գիտության բոլոր ճյուղերից:

Բուրժուազիան բոլոր ասպարեզներում՝ թե գիտության մեջ, թե դպրոցում և ամեն տեղ հուսահատ պալքար է մղում մեր դեմ իր դիրքերը չզիջելու, իր ազդեցությունը գոնե գոյություն ունեցող չափերով աշխատավորության վրա պահպանելու համար:

Յեվ ահա, չեթե մենք ուզում ենք պահպանել մեր չեղկրի ինդուստրիացման տեմպը, խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների շինարարության տեմպը, իսկ ուրիշ կերպ լինել էլ չի կարող, չեթե մենք չենք ուզում ստեղծել «չեղկրի սոցիալիստական վերափոխումը վիժեցնելու սպաննալիք», ապա մենք դրան համապատասխան պետք է «ձիգ կենանք» նաև մեր իդեոլոգիական աշխատանքի բոլոր բնագավառներում, պետք է նվաճենք գիտության, գեղարվեստի բոլոր

բարձունքները, վերջնականապես պետք է հաղթահարենք բուրժուազիային դպրոցում, պետք է բարձր մակարդակի հասցնենք իրոք վոր ամենալայն մասսաները նկատի առնող մեր պրոպագանդան և ազիտացիան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՒՈՐ ԶԵՎԵՐԻ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ  
ՄԱՔՍԻՄԱԼ ՄԻՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս կապակցութեամբ կուլտուրական հեղափոխութեան խնդիրը չերկկողմանի բնույթ է ընդունում: Մենք վոչ միայն պետք է բարձրացնենք մասսաների կուլտուրան, մենք վոչ միայն պետք է պատրաստենք նոր շինարարներ, այլ մենք պետք է նրանց պատրաստենք ամեն տեսակի բուրժուազական տրամադրութեաններ, բուրժուազական ազդեցութեաններ ղեմ կատարի պաշար մղելու վոզով: Մեր ամբողջ կուլտուրական շինարարութեանը, մեր ամբողջ ազիտացիան և պրոպագանդան չենթակա չեն հենց այդ խնդրին:

Այդպիսով, մեր կուլտուրական աշխատանքը մեր շինարարութեան բոլոր ասպարեզներում, մեր քաղաքականութեանը, պրոպագանդան, ազիտացիան, ղրպրոցը և այլն, պետք է ուղղված լինեն դեպի մի միակ նպատակ—այդ բոլորը միասնական պիտի լինեն իրենց նպատակի, ուղղութեան իմաստով—միասնականապես հարվածի իմաստով, վորը մենք պետք է տանք բուրժուազական իդեոլոգիային, վորովհետև բուրժուազական չեղույթների բոլոր և ամեն տեսակ ձևերը ձգտում են դեպի մի միակ նպատակը՝ չեռ պահել պրոլետարիատի հարձակումն ու աճումը, նրա իդեոլոգիայի տղեցութեանն աշխատավորների ամենալայն մասսա-

ների վրա, չեռ պահել սոցիալիզմի հարձակողական ընթացքը, ամրապնդել իր բուրժուազական դիրքերը:

Ուստի պետք է հաշվել մեղչանական և քնասակար այն մոտեցումը, վոր ժողովրդական լուսավորութեան, կուլտուրական շինարարութեան վրա նայում է վոչ հատակ դասակարգային տեսակետից—թերագնահատում դասակարգային պաշարը կուլտուրայի բնագավառում:

Անհրաժեշտ է ապահովել միասնականութեան մաքսիմումը մեր աշխատանքի բոլոր մեթոդների նկատմամբ կուլտուրական շինարարութեան, ազիտացիայի և պրոպագանդայի, պրոֆմիութեանների կուլտաշխատանքի, ժողովրդական լուսավորութեան, կոմյունիստիկութեան, կինկազմակերպութեանների, պիոներների և այլն աշխատանքի բոլոր ասպարեզներում: Միայն այդպիսի միասնական նպատակ դնելով է, հարձակման միասնական պլան դնելով է, վոր մենք կկարողանանք գործը ճիշտ կերպով տանել: Մեր պրակտիկական ապացուցել է, վոր հենց այդ միասնականութեանն է, վոր մեղանում չկա: Աշխատանքի վորոշ ճյուղերում մենք ձեռք ենք զարկել զուտ անսկզբունքային «կուլտուրնիկութեան», մյուս ճյուղերում՝ զուտ գրքից քաղած, սոցիալիստական շինարարութեան պրակտիկայից կարված ուսման, չերբորդ ճյուղում՝ չենք կարողացել աշխատանքն այնպես կարգավորել, վոր գործն ոգուտ ունենա. հետևանքն այն է չեղել, վոր առանձին ճյուղեր չեռ են մնացել, որինակ՝ գիտութեանն ու գեղարվեստը և խեղաթուրումներն ազիտացիայի և կուլտուրական պրոպագանդայի ասպարի-

ղում, և մանավանդ մասսայական քաղ. և կուլտուր-  
սավորչական աշխատանքի բոլոր ձևերում:

Շնորհիվ այդ հանգամանքին, ստացվում են ճեղ-  
քեր, վորոնց միջով բուրժուաչական իդեոլոգիան  
մի ճյուղից, մի պատուհանից դուրս մղվելով, ներս է  
խուժում մի ուրիշ ճյուղ, մի ուրիշ պատուհանով: Ի-  
դեոլոգիական ճակատը պետք է այնպես կազմակեր-  
պել, վոր ստացվի մի անընդհատ պարիսպ:

### ԿՍ.ԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԿԶԻՈՒՆՔՆԵՐ

Ամբողջ իդեոլոգիական ճակատի ճիշտ, հաջող  
կազմակերպություն, հարվածի միասնականությունն  
ապահովելու հիմնական պայմանը հանդիսանում է մեր  
կուսակցության աշխատանքը՝ բլջից մինչև կենտկոմ.  
վորովհետև կուսակցությունն իրրև սոցիալիզմի ամ-  
բողջ շինարարության ղեկավար, ուրեմն և՛ կուլտու-  
րական շինարարության, պետք է իմանա իր ձեռքե-  
րում կենտրոնացնել կուլտուրական շինարարության  
խակական ղեկավարությունը, պետք է կարողանա ժա-  
մանակին քաշել և իրենց տեղը դնել մեր շինարարու-  
թյան ղեկավարությունից խուսափող առանձին ո-  
ղակները:

Այդ կապակցությամբ մեր առաջ դրվում է մի  
շարք պրոբլեմներ, կուսակցության ուժերն այնպես  
վերակազմակերպելու, այնպես դասավորելու, վորպես-  
զի ապահովվի ղեկավարության մաքսիմումը կուլտու-  
րական շինարարության զանազան ճյուղերի նկատ-  
մամբ, ինչպես նաև զանազան ճյուղերի իրար մեջ ու-  
նեցած կապի մաքսիմումը:

Միանգամայն պարզ պետք է պատկերացնել կու-  
սակցության տեղն այդ ամբողջ գործի մեջ: Յեթե  
կուսակցության շարքերում առանձին տատանումներ  
գոյություն ունեն, յեթե կան ոպոդատենիստական  
տարրեր, վորոնք չեն հասկանում դասակարգչին  
պաշքարի այժմյան ետապի-ելությունը, յեթե այդպի-  
սիններ չեն մերկացված, կարող են կազմալուծել կու-  
սակցական շարքերը, տանելով սխալ վոչ բայլլեիկյան  
գիծ ինչպես տնտեսական, այնպես և կուլտուրական  
շինարարության ասպարիզում: Հետևաբար կուսակցու-  
թյան շարքերի իդեոլոգիական անաղարտությունը,  
նրա պարզ, հաստատուն քաղաքական դրույթները  
մեր պաշքարի բոլոր հարցերի նկատմամբ, վճռական  
բայլլեիկյան պաշքարը բոլոր տատանումների և յերե-  
րումների դեմ, բոլոր թեքումների դեմ՝ ամենաանհրա-  
ժեշտ պայմանն է, վորպեսզի կուսակցությունը ղեկա-  
վարության բարձրության վրա լինի\*:

Հարցերի այս խմբից հետո գալիս են այն խըն-  
դիրները, վորոնցով կուսակցությունը պետք է ազդի  
աշխատավորների ամենալայն մասսաների վրա:

Առաջին հերթին՝ պրոֆմիլությունները, կոմյու-  
րիտմիլությունը, կանանց կազմակերպությունները և  
ապա նաև մյուս հասարակական կազմակերպություն-  
ները և հենց խորհրդային ապարատը: Այդ կազմա-

\* Ուստի չի կարելի հանցադործություն չհամարել, յերբ  
նախկին ղեկավարությունը մի շարք տարիների ընթացքում հաս-  
տատուն հայացք չի ունեցել մեր գլխավոր թշնամու՝ դաշնակցա-  
կան կուսակցության սոցիալական էլիթյան մասին (տես՝ Կենտ-  
կոմի կոչից հրատարակված «Կուսակցության խնդիրները իդեոլո-  
գիական ճակատում» գրքուկը):

կերպություններից չուրաքանչյուրը, այդ խողովակներից ամեն մեկն ունի իր աշխատանքի ուրույն ճյուղը, իր ուրույն պայմանները: Այդ կազմակերպությունները զանազան ձևեր են, վորոնց միջոցով կուսակցությունը պետք է կապվի մասսաների հետ և ներգրավի նրանց սոցիալիստական շինարարության ընդհանուր գործի մեջ: Կուսակցությունը պետք է այդ բոլոր կազմակերպությունների մեջ ապահովի իր ղեկավարությունը (հարվածի միասնականություն) և ապահովի նրանց աշխատանքի ձևերի և մեթոդների աշխուժացումը:

Հենց այս տեսանկյունով էլ դրվում է կուսակցական ագիտացիայի և պրոպագանդայի բաժինների հարցը, վորոնց հսկայական կազմակերպչական դերը մեզ նից պահանջում է ավելի մեծ ուշադրություն, այդ բաժիններում աշխատողների ավելի լավ ընտրություն, վորովհետև նրանց վիճակված է իրենց ձեռքում կենտրոնացնել չերկրի ամբողջ կուլտուրական շինարարության ղեկավարությունն ու ուղղումը:

## II. ՈՒՐ ՅԵԿ ԻՆՉՊԵՍ ՈՒՂՂԵԼ ՀԱՐՎԱԾՆԵՐԸ

Բուրժուազիան, վորը իր հետևում ունի հարյուրավոր տարիներ, դարավոր կուլտուրա, մշակել է ագիտացիայի և պրոպագանդայի, մասսաների վրա ազդելու չափազանց կատարելագործված ձևեր:

Բուրժուազիայի ագիտացիան և պրոպագանդան այնպես են դրված չեղել, վոր շրջապատում չի չեղել մի առարկա, չի չեղել մի քայլ, վոր ագիտացիա չանի հանուն բուրժուազական աշխարհայացքի: Թե տանը, թե դպրոցում, թե չեկեղեցում, մարդուս ամբողջ շրջապատում այնպիսի պայմաններ ելին ստեղծվել, վորոնց միջոցով թափանցում էր բուրժուազական ազդեցությունը և նրանով ներծծվում էր ամբողջ միջավայրը:

Դասակարգային մարտերի սրման, հեղափոխական շարժման աճման ներկա ետապում ևս կապիտալիստական չերկրների բուրժուազիան դեն է շարտում արդեն ազդեցություն վարկարեկված միջոցները և անցնում ամենտեղատարչալ ձևերին, վորոնցից ամենազբլխավորներն են՝ աշխարհի միջազգային սոցիալ-դեմոկրատիան, սպորտ-միությունները, ամեն տեսակ լիգաները, զանազան առաքինություններ և այլն և այլն:

Այդ տեսակետից մենք, իհարկե, դեռ չենք հասել բուրժուազիային, մենք դեռ քիչ բան ենք արել: Նույնիսկ մեր ազդեցություն հիմնական լծակները, պրոլետարական իդեոլոգիայի մասսաների վրա ազդելու հիմ-

նական միջոցները դեռ բավականաչափ անաղարտ չեն, դեռ բավականաչափ չեն ծառայում մեր նպատակներին: Յեվ ընդհակառակը բուրժուազիայի կողմից մասսաների վրա ազդելու հիմնական գեներելից միջանիսը դեռ շարունակում են մնալ մեր չեղկընթաց բուրժուազիայի ձեռքում:

Յեկեղեցին՝ բուրժուազիայի գլխավոր գեներելից մեկը վոչ միայն գոյութուն ունի, այլև տարբեր ձևերով վերջին ժամանակներս աշխուժացրել և իր գործունեությունը: Դպրոցը, վոր մասսաները դաստիարակելու հիմնական միջոցն է և, ինչպես հայտնի չե, մասսաների վրա ազդելու և հին կարգերի պաշտպաններ պատրաստելու ամենալավ միջոցն էր, մեզանում, մեր ձեռքում, դեռևս մինչև այժմ վերջնականապես չի դարձել պրոլետարիատի գեներ, բառիս բուն իմաստով:

Մենք դեռ չենք կարողացել մեր կյանքի բազմազան կողմերն այնպես ոգտագործել, վոր ամեն մի գիծ, ամեն մի դետալ ագիտացիա մղի հոգուտ խորհրդային իշխանութիան:

Կինոյի և թատրոնի աշխատողները լավ դրված նկարի մասին սովորաբար ասում են, թե «այստեղ վոչ միայն մարդիկ, այլև առարկաներն են խաղում»:

Այդպիսի նկարում ամեն մի իր, ամեն մի առարկա այնպես և կառուցված և դրված, վոր նա խոսում, ագիտացիա չե մղում: Այդպիսի և արդյոք դրված մեզանում գործը: Դպրոցները, ակումբները, խրճիթ-ընթերցարանները, լիկկաչանները, այն ամենը, ինչ վոր ուզում էք, այդպիսի են արդյոք դրված, խոսում են արդյոք իրերը:

Մենք պետք է խոստովանենք, վոր շատ հաճախ

նրանցում մարդիկ նույնիսկ չեն խոսում, ել ուր մնաց առարկաները:

Վերցրեք Հայաստանի ամենալավ, ամենահարուստ ակումբներից մեկը՝ Լուսաշխի տունը: Դեռ լավ է, վոր այստեղ մեր դեկավարներից մի քանիսի պատկերները կան, բայց դուք այստեղ չեք գտնի վոչ մի դիագրամ, վոչ մի նկար, վորը խոսեր մեր արդյունաբերութիան, տնտեսագիտութիան վերացման, կոլտնտեսութունների շինարարութիան, մեր խնդիրների, մեր պայքարի մասին, այդ տեսակետից բացարձակապես վոչինչ չկա այստեղ: Այստեղ կան մի շարք նկարներ, ամեն տեսակ ծովեր, մշուշապատ լեռներ, արևելյան քարվանսներ և այլ գեղարվեստական հրաշալիքներ: Բայց նպաստում են արդյոք այդ լեռներն ու ծովերն ուսուցչին, կուլտուրնիկին ակտիվ հասարակական խորհրդային աշխատանքի մեջ քաշելու: Հագիվ թե: Յեթե այն, ապա շատ հեռավոր չափով, նույնքան մշուշապատ, վորքան և ակումբի պատերին նկարած մառախուղները:

Իսկ այդպես է ստացվում մեզանում, վորովհետև նախորդ հաստատուն դրույթ չունենք, մենք ակումբ ենք բաց անում, մի կերպ կահավորում, իսկ հետո վերցնում և ծրագիր կազմում՝ չեղեցիկ խմբակ, դրամատիկական խմբակ, քաղխմբակ և այլն: Իհարկե, այդպիսի ակումբները, վորոնք լավագույն դեպքում, չեթե դահլիճ ունեն, դառնում են խորհրդակցութունների և ժողովների վայր—վոչ միայն չեն կարող իրենց աշխատանքով արտացոլի մեր կյանքի ընթացիկ մարտական խնդիրները, այլև չեն կարող տանելի քաղլուսավարչական աշխատանք կատարել:

Պետք է միայն նայել մեր ակումբներին, պետք

և միայն նաչել մեր քաղաքաշխատանքին, և մանավանդ այն պարագաներին, վորի մեջ այդ աշխատանքն ընթանում է, վորպեսզի հասկանանք, վոր մենք չեա հնք մնում այն կարիքներից, վոր մեր առաջ դնում և կուսակցությունը:

Գանձ կոպեկ արժեն «իդեոլոգիական ֆրոնտի» աշխատանքներն ուժեղացնելու մասին չեղած բազմաթիվ խոսակցությունները, չերբ «փոքրիկ» հարցում, փոքրիկ խրճիթ-ընթերցարանում, վորը կոչված է լինելու կուլտուրական ոջախ գյուղում, այդ խրճիթ-ընթերցարանում վոչ պատուհան կա, վոչ դուռ, վոչ գրականություն, միշտ ցուրտ է և դատարկ: Եղևնչպես է, վոր կարծես մեր խոսքն ու գործն իրարից տարբեր են: Մենք խոսում ենք այն մասին, վոր մեր չեղելում մենք պետք է ավելի և ավելի բարձրացնենք մասսաները, վոր ազդեցության և պրոպագանդան գրան պիտի ոգնեն, վոր վոչ միայն մարդիկ, այլև առարկաները պետք է խոսեն, իսկ դուրս է գալիս այնպես, վոր նույնիսկ այն փոքրիկ հնարավորությունները, վոր մեզ մոտ կան մասսաները դաստիարակելու և մեր աշխատանքի մեջ քաշելու համար, այնպիսի ձևով են հրամցվում, վորը հազիվ թե հնարավոր լինի գրավիչ համարել:

Իսկ հարկավոր է ագիտացիայի, պրոպագանդայի, կուլտուրական շինարարության բոլոր սեռակներն այնպես կազմակերպել, վոր նրանք (այդ սեռակները) հնարավորին չափ խորք յեվ լայն կերպով ընդգրկեն աշխատավոր մասսաները, հնարավորին չափ ինտենսիվ կերպով ծավալեն այդ մասսաների սեպիդագործական ձեռնբեցությունը յեվ հմտորեն ուղղեն այդ

ձեռնբեցությունը հոգուս մեր յեկրի սոցիալիսական շինարարության:

### ԲՅՈՒՐՈՂՈՒՄՆԻՉՄԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՄԱՆՔԻ ՄԵՉ

Չկարծեք, թե բյուրոկրատիզմը միայն խորհրդային չինոֆիլի, ֆինոֆոկոմատի կամ Գործադիր կոմիտեի չինոֆիլի հատկություն է, վորը գործ ունի ամեն տեսակ բալանսների, հաշիվների, չեղար անվերջ շարք թվերի կամ խնդրատուների հետ: Բյուրոկրատիզմը մեղանում գոյություն ունի շատ բնագավառներում, գրանց շարքում և կուլտ-լուսավորչական աշխատանքում. սրա պատճառն այն է, վոր չկա բավականաչափ հստակ կողմնորոշում դեպի մասսաները: Հաճախ, չերբ վորևե տեղ դրվում է կուլտ-լուսավորչական աշխատանքը լավացնելու, լայնացնելու խնդիրը, համարյա միշտ հարց է հարուցվում հաստիքների (շտատների) մասին: Իհարկե, չի կարելի ասել, թե հաստիքը վոչ մի նշանակութուն չունի, բայց հասարակական ձեռնբեցությունը հաստիքի խնդրով փոխարինելն է արատը: Աշխատողի խնդիրն այն է, վոր գտնի, սովորեցնի և առաջ քաշի հետզհետե նորանոր կադրեր վոչ թե շտատների կարգով, այլ լայն հասարակական ձեռնբեցության կարգով:

Վերցնենք բյուրոկրատիզմի մի ուրիշ որինակը կուլտ-աշխատանքի մեջ: Որինակ, մեր պրոֆմիտությունների կուլտուրական աշխատանքը: Մինչև այժմ մարդիկ (իսկ աչդպիսիները չեղել են նաև Հայաստանի պրոֆմիտությունների դեկավար վերնախավի մեջ) չեն հասկացել, վոր կուլտուրական հեղափոխությունը

կտրելի չե միայն այն ժամանակ բարձրացնել, չերբ  
ամբողջ մտասան, խորհրդային հասարակայնութեան  
բոլոր ողակներն իրենք կհատնաբերեն ձեռնբեցու-  
թյուն, իրենք հետամուտ կլինեն մասաների կուլտու-  
րականութեանը բարձրացնելուն: Մի այնպիսի հզոր  
կազմակերպութեան ղեկավարներէց միքանիսը, ինչպի-  
սին պրոֆմիութեաններն են, վորոնք ըստ բոլոր նշան-  
ների իրենք պետք է վերցնելին իրենց ուսերի վրա  
չերկրի կուլտուրաւորչական աշխատանքի մի խոշոր  
մասը, մինչև այժմ մտածել են և գուցե մինչև այժմ  
եւ շարունակում են մտածել, վոր կուլտուրաւորչա-  
կան աշխատանքը պետական մարմինների, քաղա-  
գլխավորի գործն է. պրոֆմիութեանների մասնակցու-  
թյունն արտահայտվում է միայն «վճարուճներ» կատա-  
րելով և հսկողութեամբ, իսկ նրանց ուղղակի պարտա-  
կանութեանն է վոչ թե կուլտուրաւորչական աշխա-  
տանքը, այլ միայն բանվոր դասակարգի տնտեսական  
շահերի պաշտպանութեանը:

Ահա հենց այս է բյուրոկրատիզմը, չինոֆիկա-  
կան մտեցումը կուլտուրական աշխատանքի խնդր-  
ներին:

Այսպես ուրեմն, մե՞նք պե՞տք է ամբողջ կուլ-  
տուրական շինարարութեան յեւ մասսաների բաղա-  
կան գասիւրակութեան խնդիրն այնպես զննե՞ք, վոր-  
պեսզի մեր բոլոր ձեռնարկութեանը, մեր բոլոր  
կազմակերպութեանը ու հիմնարկութեանը լի-  
նեն վոչ միայն սնեսական, պրոֆեսիոնալ յեւ բա-  
ղաբական կազմակերպութեանը, այլեւ միաժամա-  
նակ կասարեն կուլտուրական հեղափոխութեան գործը:  
Մենք պետք է հետամուտ լինենք այնպիսի դրութեան,

վորպեսզի գլուղական կոոպերատիւը լինի վոչ միայն  
առևտրի կենտրոն, այլև կուլտուրական կենտրոն: Մենք  
պետք է հետամուտ լինենք այնպիսի դրութեան, վոր-  
պեսզի մեքենաները, ակումբները, կոոպերատիւները,  
կոլտնտեսութեանները, դպրոցները միաբերան խոսեն  
մեր քաղաքականութեան դասակարգային ելութեան  
մասին, քակտիվ աշխատանք տանեն մասսաները դաս-  
տիարակելու և կուսակցութեան հիմնական լողունգնե-  
րի շուրջը համախմբելու համար:

Իբրև որինակ, վոր մեռյալ մեքենան էլ կարող  
է խոսել, կարելի չե վերցնել Հայգլուղկոոպի մե-  
քենաների հայթայթման բաժինը: Այդ բաժինը  
չեր կարողանում պատկերացնել, թե ինչպես պետք  
է մեքենաները բաշխել: Մենք էլ չենք խոսում  
այն մասին, վոր նա չուներ կողմնորոշում դեպի  
կուլտուրական-քաղաքական աշխատանքը: Այդ  
բաժինը չեր պատկերացնում, վոր հարկավոր է  
ոգնել կոլտնտեսութեաններին, խորհրդային տըն-  
տեսութեաններին, գլուղական չքավորներին և  
միջակներին, վոր պետք է ամեն կերպ աշխատել  
վորպեսզի մեքենաները վոչ միայն կուլակի ձեռ-  
քը չընկնեն, այլև նպաստեն չքավորութեան և  
միջակ գլուղացիների արտադրական կոոպերաց-  
մանը: Այս բոլորը նրանք չեին հասկանում, չգի-  
տեցին, այլ պարզապես մեքենաներով առուտուր  
ելին անում, ինչպես վոր հեշտ էր, այնպես էլ  
ծախում էին:

Հետևանքն այն է լինում, վոր մեքենաները  
մեծ մասամբ ընկնում են կուլակային և ունևոր  
տարրերի ձեռքը: Այստեղ մեքենան խոսեց, բաց  
վոչ հոգուտ խորհրդային իշխանութեան, վոչ հո-  
գուտ կոլտնտեսութեան:

ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄ - ԴԱՇՆԱԿԻԶՄ. ԿՈՒՂԱԿ ՅԵՎ  
ՅԵԿԵՂԵՑԻ

Մոտենալով իդեոլոգիական ֆրոնտի հարցերն ա-  
վելի կոնկրետ կերպով դնելուն, մենք պետք է հետե-  
վենք բուրժուազական իդեոլոգիայի արտահայտման հիմ-  
նական ձևերին, պիտի հետևենք այն խողովակներին,  
վորոնցով այդ իդեոլոգիան ներս է թափանցում աշ-  
խատավորներին շարքերը, նշենք պաշարի կոնկրետ ճա-  
նապարհները:

Գոյութուն ունեն հակապրոլետարական իդեոլո-  
գիաների արտահայտման հետևյալ տեսակները՝ ա) ակնհայտ կուլակային ագիտացիա գյուղում, բ) կրոնա-  
կան ագիտացիայի աշխուժացում և ուժեղացում, գ) նա-  
ցիոնալիստական տրամադրութունների աշխուժացում,  
այդ տրամադրության թափանցումը մեր կյանքի բո-  
լոր ծակոտիները:

ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄ

Մեր առաջին և գլխավոր թշնամին է նացիոնա-  
լիստական իդեոլոգիան, կամ բուրժուազիայի ազդե-  
ցութունը նացիոնալիզմի միջոցով: Նացիոնալիզմն  
իր բուրժուազիայի դասակարգային իդեոլոգիա, իր  
տարբեր, քիչ թե շատ ծածկված վարիացիաներով,  
ընդհանուր դրոշ է հանդիսանում չերկրի բոլոր հակա-  
խորհրդային ուժերի համար:

Յեթե բացահայտ կուլակային ագիտացիան խոր-  
հրդային իշխանության ձեռնարկումների դեմ, կոլտըն-  
տեսութունների և խորհրդային տնտեսութունների  
դեմ—կարող է շոշափել միայն միջակ գյուղացիության

վերնախավը և միայն ամենաանշան չափով միջակ-  
ներին և չքավորներին, ապա ազգայնական ազդեցու-  
թյունը, ազգայնական տրամադրութունները կարող  
են շոշափել վոչ միայն միջակ գյուղացիության վեր-  
նախավը, այլև կարող են թափանցել չքավորության,  
բատրակության և նույնիսկ բանվոր դասակարգի մեջ:

Նացիոնալիզմն ավելի վտանգավոր է նաև նրա-  
նով, վոր ունենալով մի շարք միջոցներ քողարկված  
«համամարդկային» լոզունգներով, հենվելով անցյալի  
հարուստ ժառանգության վրա, այժմյան պայմաննե-  
րում գտնում է սնվելու համեմատաբար հարուստ  
աղբյուրներ:

Սակայն նացիոնալիզմը հանդիսանում է միայն  
մի հարմար ձև, վորի միջոցով բուրժուազիան մաս-  
սաները զորահավաքի չե չենթարկում, պոկում է նրան  
իր դասակարգային պաշարի խնդրից և վերածում կա-  
պիտալի ագրեսիվ նպատակների հյու գործիքի:

Այսպիսով, նացիոնալիզմը հանդիսանում է գրեթե  
բոլոր հակախորհրդային ուժերի համար, վորովհետև  
հանդիսանում է ամենից ավելի կենսուճանակ, առաձ-  
գական ձեՎ, վորի հետևը թագնված են անցյալ պե-  
տական սիստեմի և բուրժուազական շրջափակման իմ-  
պերիալիստական ագրեսիայի բաղձանքները:

Վոր նացիոնալիզմին պետք է խփել առաջին  
հերթին: Ամենից առաջ մենք պարտական ենք խփել  
հաշկական նացիոնալիզմին՝ այն նացիոնալիզմին, վորը  
ձգտում է ողտաղործել Ա.Ն.Ֆ.Ս. և ԽՍՀՄ. ը, վորպեսզի  
Հայաստանի զարգացումն ուղղի տնտեսական ունի-  
վերսալիզմի և ազգային սահմանափակության ուղիով,  
այն նացիոնալիզմին, վորն անվստահութուն է սեր-

մանուկ դեպի ազգային փոքրամասնութիւնները և հարեան հանրապետութիւնների ժողովուրդները, վորը ձգտում է խեղաթուրել մեր ազգային քաղաքականութիւնը, այն նացիոնալիզմին, վորը ձգտում է վարդազույն, վառ գույներով պատկերացնել լայն մասսային ամեն տեսակ ազգային «պարծանքներ», ինչպես ամբողջ պատմութիւնն ու պատմական անձնավորութիւնները, այնպես և մեծ մասամբ նացիոնալ-ռոմանտիկական գրականութիւնը:

Այն ընկերները, վորոնք այդ չեն հասկանում, որ յեկտիվորեն ոգնում են նացիոնալիզմին, նրանք, վորոնք առաջին հերթին չեն դնում «իրենց» նացիոնալիզմի դեմ պայքարելու խնդիրը, զինաթափ են լինում թշնամու առաջ, վորով արգեն գծվարացեում են մեռ պայքարը ցացիոնալիզմի դեմ առեաստակ: Միայն չուրացնելով իր ժողովրդի նացիոնալիզմի դեմ պայքարելու տեսակետը, կարելի չէ լինել իսկական ինտերնացիոնալիստ՝ կռվել ամեն տեսակ նացիոնալիզմի դեմ:

### ԻնՉՊԵՍ ՊԵՏՖ Ե ԿՌՎԵԼ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Կարելի՞ չէ արդէք նացիոնալիզմի դեմ մղվող պայքարը պատկերացնել միայն ագիտացիայի և պրոպագանդայի շրջանակներում:

— Վոչ, չի կարելի պատկերացնել նացիոնալիզմի դեմ մղվող պայքարը մի կողմից պետք է շոշափի այն հիմնական, որ յեկտիվ պատճառների վերափոխումը: Վորոնք սնում են նացիոնալիզմը, իսկ մյուս կողմից մեր ազգային քաղաքականութիւն անցկացման

ժամանակ տեղի ունեցած սուբյեկտիվ սխալները վճռական ուղղումը:

Այդպիսի հիմքերից մեկը պետք է համարել նացիոնալիստական աղբիւրութիւն ամենից ավելի չենթակա խավը՝ տնայնագործներին, արհեստավարներին և ինտելիգենցիայի մի մասը:

Իրրև մեր տնտեսութիւն սոցիալիստական հատվածի աճման հետեանք դուրս է մղվում տնայնագործը, արհեստավորը, մանր խանութպանը—ընդլայնվում է գործազրկութիւնը: Գործազուրկների շարքերն են ընկնում մեր խորհրդային հիմնարկութիւնների վարչական ծախսերի կրճատման հետեանքով խորհրդային ծառայող ինտելիգենցիայի նշանակալից կադրեր: Ստացվում է նացիոնալիստական ագիտացիայի ամենից ավելի չենթակա մարդկանց զժգոհ մի խավ: Նացիոնալիզմը հենվում է և ամենից ավելի նպաստավոր հող է գտնում հենց այդ խավերի մեջ: Մեր խընդիրն է՝ առանց բնավ փոխելու մեր հիմնական քաղաքական գիծը չերկրի ինդուստրիացման նկատմամբ, զարգացնել արհեստային կոոպերացիայի գործը: Մտնավանդ վոր, մեզանում, թեթև արդշունաբերութիւն ապրանքների պակասութիւն պայմաններում, արհեստային կոոպերացիան կկարողանա դառնալ արդշունաբերութիւն ոժանդակ ճյուղ, կարող է ոգնել շատ «նեղ» տեղերում: Մենք պետք է այդ հարցին լուրջ կերպով մտտենանք: Մեզանում, մասնավորապես Հայաստանում, գործի այդ կողմի վրա վոչ մի ուշադրութիւն չի դարձվում: Այնուհետև, գործազուրկների վերավորակավորման խնդիրը, մասնավանդ ինտելիգենտներին: Մենք վոչ միայն այդ չենք արել, այլ

ընդհակառակը, արհեստական կերպով ընդլայնում ենք այդ գործազրկութունը նրանով, վոր մեր II աստիճանի դպրոցները դեռ մինչև այժմ ել պատրաստում են գործազուրկ իտելիգենտների կազմը: Այստեղ հարկավոր է մեծ լրջությամբ դնել և լուծել մեր միջնակարգ դպրոցի պրոֆեսիոնալ թեքման հարցը:

Այդ ասպարիզում Լուսժողկոմատի անելիքները հսկայական են, իսկ այդ ուղղությամբ նրա կատարած գործը թերի չէ:

Հսկայական նշանակություն ունի նացիոնալիզմի դեմ մղած պայքարի մեջ մեր խորհրդային ապարատը, վորն անմիջապես շփվում է մասսաների հետ:

Պետապարատում մենք անշուշտ ունենք նացիոնալիստական տրամադրությունների արտացոլում: Պետապարատի միջանի տարրեր ոգտվելով կոմունիստ դեկավարների թուլությունից, հաճախ տնտեսական աշխատանքը, ինչպես և խորհրդային շինարարությունը պատկերացնում են նեղ ազգայնական տեսակետից: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մեր ապարատների կազմերին, նորերն ընդունելու գործին, անպայման դուրս շարտելով ակնհայտ նացիոնալիստական, քայքայված տարրերին: Չի կարելի մատների արանքով նայել այն խորհրդային աշխատողի վրա, ըստ վորի բանվորներն ու գյուղացիները դատում են խորհրդային իշխանություն մասին:

Բոլորովին վերջերս մենք վկա ելինք մի ամենապլանդակ փաստի, ակնհայտ սև հարցուրակային, բացահայտ դաշնակցական վերաբերմունքի դեպի աշխատավորները խորհրդային իշխանություն ներկայացուցիչներից մեկի կողմից:

Նոր-Բայազետի գավառի Բասարգեչարի շրջանում թշուրք գյուղացիները դանդաղ են անում դատախազին ինչ-վոր վոչ բոլորովին սովորական հարցերի մասին: Յեվ ահա, փոխանակ խնդրատուներին ուշադրություն մը լսելու և ամեն ինչ անելու, վորպեսզի բալլեվիկոներն լուծում տրվի նրանց բոլոր խնդիրներին, այդ սրանից հետո արդեն նշանավոր դարձած դատախազը աշխատավորների խնդրին պատասխանում է՝ «մենք առաջին հերթին հայերի գործն ենք լուծում, իսկ ապա գուցե քննենք նաև ձեր գործերը: Ասենք, չի՞ս հո չե՞մ ձեր դատախազը, ձեր դատախազն Ադրբեջանումն է»:

Յեթե այդ նույնիսկ մոտավորապես ճիշտ լինի, չեթե այդ պնդումն իսկականին գոնե մոտավոր նմանություն ունի, պարզ է, վոր այդ փաստը մեր իշխանություն ամենավատ վարկաբեկումն է, ամենավատ ազգայնական ագիտացիան է: Նման տարրերը մեր խորհրդային ապարատում (իսկ վոր այդպիսիները կան, դրանում կասկած չկա) հանդիսանում են ամենամիսասակար, ամենավտանգավոր տարրերը խորհրդային իշխանություն համար: Չի վոր այս վոչ միայն խորհրդային ապարատի անգործունեությունն է, վոչ միայն խորհրդային ապարատը վարկաբեկող հասարակ զեղծարարություն է, այլ այդ տարրերի համեմատ ել աշխատավորների չերևակայություն մեջ պատկերանում է խորհրդային իշխանությունը: Իհարկե, վորքան էլ վոր մենք գրենք, ագիտացիա մղենք, մի այդպիսի շովինիստը կարող է գործը փչացնել, կարող է այնպիսի ագիտացիա կատարել, վոր նրանից հետո 1000 ագիտավրոպ էլ հազիվ թե կարողանան գործն ուղղել: Ուստի պարզ է, վոր պետք է պահանջել խորհրդային

ապարատի դտում ակնհայտ նացիոնալիստական տարրերից:

Խորհրդային ապարատի կայուն, հստակ, դասակարգային գծի, ամեն մի առանձին աշխատողի համար մենք պետք է կռիվ մղենք: Հակառակ դեպքում մեր խորհրդային ապարատը նրա վրա բարդված խնդիրների տակից չի կարող դուրս գալ:

Այս խնդրի հետ սերտ կերպով կապված է նաև տեղական լեզուների գործածություն խնդիրը: Մենք մինչև այժմ ել այդ հարցն ամբողջովին չենք սպառել: Շատ թյուրքական և ուսական գյուղեր ստանում են զանազան պաշտոնական թղթեր վոչ թե իրենց լեզվով, այլ հայերեն: Մինչև այժմ չի անցկացված ազգային-կուլտուրական ուսուցացումը: Դեպի նման հարցերը չեղած անփութ վերաբերմունքի դեմ պետք է դաժան պտջար հայտարարել: Որինակ, մինչև այժմ Հայաստանի ուս ազգաբնակությունը փաստորեն կտրված է մեր ամբողջ շինարարությունից, նա՝ տեղյակ չե, չի ճանաչում կամ միայն լսածովն է ճանաչում մեր ընթացիկ կյանքը, միայն այն պատճառով, վոր համարյա վոչ մի գրականություն չկա ուսերեն լեզվով այդ հարցերի մասին, լրագիր չկա և այլն:

Ով վոր չի հասկանում, վոր մեր հասարակական կյանքը հուզող բոլոր հարցերին բավականաչափ բազմակողմանի կերպով տեղյակ պետք է պահվեն նաև ազգային փոքրամասնությունները, և վոր այդ մեր շինարարության խոշորագույն հարցերից մեկն է, ով վոր չի հասկանում, վոր թյուրքական գյուղում, ուսական գյուղում մենք պետք է աշխատենք թյուրքերեն և ուսերեն լեզուներով, այդպիսի ընկերները շեղ-

վում են մեր լինիչյան ազգային քաղաքականությունից դեպի նացիոնալիզմ:

Նման թերությունները խրախուսում են ազգայնական տրամադրություններն ազգային փոքրամասնությունների շրջանում, խրախուսում են ազգային փոքրամասնությունների մեջ չեղած կուլակային տարրերի կողմից խրախուսվող թշնամական տրամադրությունները դեպի Խորհրդային Հայաստանը:

Սակայն, այս ասպարիդում չպետք է աչքաթող անել նաև նույն գործի հակառակ կողմը: Մենք պետք է խփենք այսպես կոչված մեղանական ինտերնացիոնալիզմին, վորը չի տեսնում դասակարգերը, կամ ավելի ճիշտն ասած, չի ուզում տեսնել դասակարգերը ազգային փոքրամասնությունների միջև, հստակ դասակարգային գիծ չի բռնում ազգային փոքրամասնությունների նկատմամբ, խոսքը մեկ է անում բեկերի, կուլակների հետ, վորպեսզի նրանց չնեղացնի, իբրև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Այդ ճիշտ գիծ չե, այդ վարկաբեկում է մեր քաղաքականությունը: **Մեռչառկան ինտերնացիոնալիզմը չի կարող ոգեել մեր գործին:**

Այսպես ուրեմն, թշնամի իդեոլոգիաների դեմ մղվող պայքարի հիմնական պայմանն է դասակարգային մոտեցման հստակությունը մեր շինարարության բոլոր բնագավառներում:

Պետք է հետամուտ լինել խորհրդային ապարատի բոլորովին հստակ և ճկուն աշխատանքի: Աշխատանքը չքավորության մեջ, մեր կոպերացիայի, գյուղատնտեսական վարկի, մեքենաների հայթայթման աշխատանքը և ամբողջ տնտեսական շինարարությունը

պետք է միանգամայն ուռուցիկ կերպով, միանգամայն պարզ կերպով ուղղվեն դասակարգային պայքարի գծով: Դալքայման տարրերը, կուլանկին և նեպմանին զիջելու տարրերը պետք է վերացվեն: Ճիշտ նույնպես պետք է վճռական պայքար հայտարարել ամեն տեսակ անփութության դեմ հակակրոնական պրոպագանդայի ասպարիզում: Անտարբեր, իսկ չերբեմն նաև «չեղոք» վերաբերմունքը դեպի, այսպես կոչված, նոր կամ կենդանի չեկեղեցին՝ անթույլատրելի թուլութունն է, վոր արժանի չէ ամենադաժան քննադատության:

Մասաների դասակարգային դաստիարակությունը, նրանց վերափոխումն անհաշտ խնտերնացիոնալիզմի վոգով, մեր հեղափոխության խնդիրները—մեր չերկրի սոցիալիստական վերաշինության խնդիրների հստակ հասկացողության վոգով՝ չի կարելի մտածել միայն ագիտացիայի և պրոպագանդայի ձևով: Այդ անհրաժեշտ է, բայց միայն այդ բավական չէ: Հարկավոր է մեր ամբողջ աշխատանքը, մեր ամբողջ շինարարությունը այնպես կազմակերպել, վորպեսզի այդ շինարարությունը պարզ կերպով հակադրի ցացիոնալիզմին, կուլակին, զաւճակին, յեկեղեցուն. ահա գործի միայն այսպիսի կազմակերպումը կարող է արդյունք ստացվել, միայն այն ժամանակ կարող ենք ցայտակարգ հասնել:

Մեր տնտեսական շինարարությունը պետք է ընթանա Անդրկովկասյան Ֆեդերացիայի ուժեղացման, հարևան հանրապետությունների հետ մեր կապն ուժեղացնելու չափազանց հստակ գրույթի ուղիով:

Կոմունիստ-տնտեսավարները, կուսաշխատողները,

ըր, կոմունիստ-կուսաշխատողները աշխատանքը պետք է տանեն վոչ թե առանձնացած կամ կղզիացած ձևով, այլ իբրև մի մեծ ամբողջի անբաժանելի մասնիկ՝ բոլոր աշխատանքներով, աշխատանքի բոլոր չեղանակներով նպաստեն Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ-ի ամբողջականության, նրա միասնականության պահպանման:

### III. ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԵՎ ՈՐԱԳՈՒՅՆ ՈՂԱԿՆԵՐԸ

Ակզբում մենք արդեն ասել ենք մեր ազիտացիայի, պրոպագանդայի և ամբողջ կուլտուրական շինարարության ելուծյան, հիմնական բովանդակության և կոնկրետ նպատակադրության մասին: Այժմ հնարավորին չափ կոնկրետ կերպով խոսենք այդ աշխատանքի գլխավոր ճյուղերի կազմակերպման մասին:

**ՍԿսեճԲ ԵՖԱԿՈՒՐՍԻԱՆԵՐԻՅ:** Եքսկուրսիաները տարբեր հանրապետությունների աշխատավորության մոտեցման մեծագույն միջոցն են: Այդ եքսկուրսիաները մեզանում անասելի վատ կերպով են զրված: Նրանք հաճախ անսխտեմ և անբովանդակ են: Մարդիկ գնում են, քաղաքները պատում են, չես են դառնում և լավ ե: Իրանից վոչինչ չի դուրս գա: Եքսկուրսիաները պետք է հասկանալ ուրիշ կերպ, լրջորեն: Նրանց նպատակն է մասսաները լայն կերպով ծանոթացնել հարևան հանրապետությունների աշխատավորության կյանքի և կենցաղի հետ և այդ հիման վրա նրանց կոնկրետ մոտեցումը: Որինակ, ասենք Ալլահվերդումի տասնյակ բանվոր եքսկուրսիա չե գնացել Բագու կամ Նուխի: Այնտեղ նրանք վոչ թե պարզապես զբոսնում են, այլ բարեխղճորեն ծանոթանում են թե արտադրության, թե կենցաղի, թե տեղի հասարակական աշխատանքների հետ, Աղբրեջանի բանվորնե-

րին մասնակից դարձնելով իրենց փորձին, իսկ վերադառնալուց հետո լայն կերպով ծանոթացնում են իրենց տեսածի հետ իրենց ձեռնարկության բանվորներին և ապա մի անգամ արդեն սկսված կապը շարունակվում է բոլորովին գործնական հողի վրա, փոխադարձ (թեկուզ գրավոր) ինֆորմացիայի միջոցով արտադրական խորհրդակցությունների ու մեր արտադրության կազմակերպության բոլոր մյուս հարցերի և կուլտուրական ու տնտեսական շինարարության ընդհանուր հարցերի մասին:

Իհնչու, որինակի համար, Եջմիածնի կոլխոզնիկները չպետք է փորձեն նման եքսկուրսիա կազմակերպել Վրաստանի Զուգդիդի գավառը՝ այնտեղի կոլխոզնիկների մոտ:

Թե Լուսժողկոմը, թե մանավանդ պրոֆմիտությունները պետք է եքսկուրսիոն աշխատանքին ավելի մեծ ուշադրություն նվիրեն: Հարկավոր է ընդլայնել եքսկուրսիաների պրակտիկան, նրանց հնարավորին չափ արտադրական սկզբունք հաղորդել, կանխամտածված կերպով կազմակերպել եքսկուրսիոն աշխատանքի բոլոր մանրամասնությունները, այդպիսի եքսկուրսիաներն ավելի սխտեմատիկ դարձնել վորոշ կոնկրետ նպատակադրությամբ: Այսպես միայն պետք է հասկանալ եքսկուրսիան, իսկ մենք շատ հաճախ եքսկուրսիաներին վերաբերվում ենք ինչպես մի դատարկ զբոսանքի կամ զվարճալիքի, այն ինչ, չեթե գործն ինչպես հարկն է դրվի, եքսկուրսիաները կարող են ծառայել իբրև մասսաների ինտերնացիոնալիստական դաստիարակության մի ուժեղ գնք:

**Սյնուհեսեվ գպրոցի մասից:** Մեր դպրոցներում

մենք մինչև այժմ պետք չեղած բարձրութեան վրա  
չենք զբել այնպիսի առարկաների դասավանդումը, վո-  
րոնք մեր ուսանողներին պետք է ծանոթացնեն հա-  
րևան հանրապետութիւններ կյանքի և կենցաղի հետ:  
Ինչպէս գործն այնպէս չդնենք, վոր մեր ուսանողները  
կարողանան ավելի շատ բան սովորել հարևան հան-  
րապետութիւնների աշխատավորների վորձից: Մենք,  
իհարկե, այս բոլորը կարող ենք անել: Ընդհակառակը,  
այս բոլորի փոխարեն մեր դատագրքերում պատահում  
են այնպիսի տեղեր և ամբողջ գլուխներ, վորոնք, չեթե  
փափուկ արտահայտվելու լինենք, կասկած են առա-  
ջացնում այդ գրքի իդեոլոգիական կաշտութեան  
նկատմամբ:

Գեղարվեստական գրականութեան գծով մենք  
մինչև այժմ հայերեն լեզվով վոչինչ չուենք, կամ  
համարյա թե վոչինչ չուենք, վորը լուսաբաներ Վրաս-  
տանի և Ադրբեջանի պրոլետարիտների աշխատանքը:  
Իսկ այդ կոնկրետ հարկավոր աշխատանք է: Վերցնենք,  
որինակ, մեր լրագրները: Այնտեղ շարունակ գրում են  
Լեհաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի մասին և շատ  
հազվագլուտ դեպքերում և քիչ են գրում Վրաստանի  
կամ Ադրբեջանի մասին: Հեռու լեզուների և բոլոր  
մշտանների մասին գրելը, անպայման անհրաժեշտ է,  
բայց մեզանում ստացվում է ինտերնացիոնալիզմի  
շատ լայն թափ:

Հետևանքն այն է լինում, վոր մեր ընթերցողն  
ավելի լավ է պատկերացնում և իմանում ինչ-վոր Ֆի-  
լիպյան կղզիներ, քան մեր հարևան Վրաստանն ու  
Ադրբեջանը:

Այդ, իհարկե, միանգամայն աննորմալ բան է:

Մեր դպրոցն այդ իմաստով լուրջ ուղղումների կարիք  
է զգում և առաջին հերթին իր ծրագրային նպատա-  
կադրումների տեսակետից: Հարկավոր է այդ դպրոցն  
ամենից առաջ ավելի մոտեցնել մեր տնտեսական և  
կուլտուրական շինարարութեան խնդիրներին մի կող-  
մից և մյուս կողմից դպրոցականի ուսուցման այնպիսի պայ-  
մանների մեջ դնել, վորպեսզի ինտերնացիոնալ—դա-  
սակարգային—հակակրոնական դաստիարակութիւնն  
անպայման կենտրոնական, վճռող տեղ բռնի ամբողջ  
մանկավարժական գործի կազմակերպութեան մեջ:

Մեր դպրոցների այդ գծերով չեղած պակասու-  
թիւնների քննադատութիւնն ամենից հաճախ իբրև  
հիմնական չարիք, հիմնական թերութիւն ցույց է  
տալիս ուսուցիչների մի սովոր քանակի իդեոլոգիա-  
կան անկաշտութիւնը և սովորողների վատ սոցիա-  
լական կազմը: Չբացասելով, վոր դասատուների մեջ  
կան անշուշտ ազգայնական տարրեր, ինչպէս և այն,  
վոր գյուղացիական չքավորութիւնը, մասամբ նաև  
բանվորութիւնը թույլ են ընդգրկված մեր զբա-  
ղոցներում, մանավանդ միջնակարգ և բարձրագույն  
դպրոցներում, վորպիսին հիմնականում բացատրվում  
է այդ նպատակի համար տրամադրվող ֆինանսական  
միջոցների բացահայտ անբավարարութեամբ, մենք  
քննադատների ուղարկութիւնն ենք դարձնում մի  
ամբողջ շարք ուրիշ խնդիրների վրա, ուր մեր կար-  
ծիքով պետք է հիմնականում փնտռել չարիքի ար-  
մատները:

Մեզանում չերեմն շատ սուր կերպով քննադա-  
տում են այս կամ այն մանկավարժին (առհասարակ  
կարծես թե չափազանցրած քննադատութիւնը մեզա-

նուն վորոշ չափով հիվանդոտ թափ է ընդունում): Հիշենք ամառվա պատմությունը Ս.-ի հողվածի առթիվ «Ս. Հ.»-ում, ուր խոսվում էր Շախտինսկու գործի մասին դպրոցում: Կամ ահա նորերս քիչ մնաց, վոր հակահեղափոխական հայտարարեն մի մանկավարժի, «վորը Մխացյալ Նահանգների մասին խոսելիս, ուրախ էր արամադրված և ժպիտը շրթունքներին էր, իսկ չեղբ խոսում էր ԽՍՀՄ-ի մասին, մուսլ էր և բուրորովին չեղ ժպտում»:

Իսկ արդյոք մենք մեղ հարց տալի՞ս ենք, թե վորքան հմտորեն ենք մենք կազմակերպել գպրոցի ղեկավարությունը:

Կարելի՞ չե արդյոք հարցնել, թե քանի՞ անգամ և վճր լուսբաժինն է հավաքել I կամ II աստիճանի գպրոցների ուսուցիչներին և նրանց հետ միասին խելք-խելքի տվել, թե ի՞նչպես և ի՞նչ ձևով կազմակերպել ինտերնացիոնալ դաստիարակությունը դպրոցում, ի՞նչպես դասավանդել մայրենի լեզուն, վորպեսզի, ինչպես մեզանում հաճախ լինում է, հայերեն լեզվի և միքանի հին հալ գրողների իղեալականացման փոխարեն, սովորողներին իսկական դասակարգային բացատրություն տրվի:

Իսկ բնագիտության դասատուն միթե գիտե՞ և կարողան՞ում է ժողովրդական լուսավորության մարմիններին ոգնություն մը իր դասավանդումն աչնպես զնել, վորպեսզի աշակերտը գիտական հիմնավորումն ստանա կրոնի սոցիալական բնույթի մասին:

Այնուհետև պատմության և ուրիշ շատ առարկաների դասատուներ իրենց գծով կարողան՞ում են ար-

դյոք այդ գործը կազմակերպել: Վոչ, չգիտեն, և այդ նրանց մեղքը չե:

Իսկ չեթե հաշվի առնենք, վոր մեր ուսուցչություն հակալական մեծամասնությունն աչնքան էլ գրապետ չե ընդհանրապես և մանկավարժական գծով մասնավորապես, թպա պարզ կլինի, վոր մեք խորհրդային մանկավարժը լուրջ ոգնություն չեկ լուրջ աշակցության կարիք է գգում: Նրա գործն արխիղժվար է, արխի-պատասխանատու, և այդ գործում նրա գլխին է թափվում խիստ քննադատություն, իսկ ոգնություն աչնուամենայնիվ քիչ է ցույց տրվում:

Այս կողմից բավական է միաչն նայել մեր Պետգիտխորհի (ԿԿ) արտադրանքին թե արտադրողականություն իմաստով և թե արտադրանքի վորակի իմաստով, վորպեսզի պատկերացնենք այդ անհրաժեշտ ոգնության դրությունը: Ձե՞ վոր մենք Պետգիտխորհ մինչև այսոր էլ չունենք իբրև աչդպիսին:

Ձե՞ վոր Լուսժողովի, ճշմարիտն ասած, խղճուկ ամսագիրը չի ոգնում մեր խեղճ ուսուցչին, ասենք, նա հազիվ թե կարգա չեկ այդ ամսագիրը, իրավացիորեն համարելով աչդպիսին փողի, թղթի և սպագրական ներկի աննպատակահարմար ծախս:

Կասկածում եմ, վոր ուսուցիչը, որինակ, մեղավոր լիներ մի աչնպիսի գործում, ինչպիսին է աչն, վոր I աստիճանի դպրոցները ուսերեն լեզուն բուրորովին չեն անցել, իսկ բարձր տիպի դպրոցներում այդ առարկան կամ պարտադիր չի համարվել, կամ անց է կացվել ճիշտ աչնպես, ինչպես և գերմաներեն լեզուն առաջվա իգական գիմնագիտներում: Միթե այդ գործի գլուխ կանգնած մարմինները չեն իմացել, վոր առանց բա-



նկար լինել, բայց միթե մեր կինո-աշխատողներին հայտնի չե, թե ինչու համար ե ծառայում կինոն:

Կինոն խոշոր կուսակցական գործ ե: Այդ ճշու-դին պետք ե ամենալուրջ ուշադրութիւնը նվիրել: Կինո-կադրերի ստեղծումը, պրոլետգրողներին անհրա-ժեշտ սցենարները կազմելուն մասնակից դարձնելը, վորոնք, ի միջի այլոց, խրոնիկորեն պակասում են Հայ-կինոյում, և այլն, հսկայական կուլտուրական և քա-ղաքական կարեւորութիւն ունեցող գործ ե:

Մեր չերկրի կինոֆիլացիան չափազանց դան-դաղ ե ընթանում. միքանի գավառներում նուշնիսկ շարժական կինո չկա, իսկ չեղածներն ել մեծ մասամբ պտտում են վազուց արդեն հնացած, թե ֆիզիկապես և թե ըստ բովանդակութեան մաշված ժապավեններ:

Վատ ե դրված նաև մեր գյուղին կինո-ժապավեն հայթայթելու գործը: Հիմնական հայթայթիչ մարմին ե չեղել մեզ մոտ, չգիտենք ինչու, Արմխորհի Կուլտ-բաժինը. թե Արմխորհը և թե Հայկինոն սովորաբար գյուղ են ուղարկում ամեն տեսակ անպետք նկարներ, և այն ել բարձր վարձագէտով:

Այստեղ, այս ճշուդում ևս, ինչպես կուլտուրա-կան աշխատանքի շատ ճշուդերում, արտահայտվում ե Հայաստանի համար բնորոշ մի թեքում, վորը կարելի չե անվանել չարչիական թեքում մեր կուլտուրական աշխատանքի մեջ, հենց են ե՝ մի կերպ վաստակեն: Ճիշտն ասած, դեռ շատ ու շատ բան ե մնացել մեր ի-րականութեան մեջ Պարոնյանի կողմից այնպես դասա-կանորեն ծաղրված «Մեծապատիվ մուրացկաններից»:

Մի ուրիշ մեծ գործ **Ուղիոն** ե:

Անցնելով ռադիոյին, պետք ե ասել, վոր մեր աշ-

խատանքի թերութիւններն այդ ասպարիզում, բացի այն, վոր պայմանավորված են այդ գործի նորութեամբ մեղանում առհասարակ, բացատրվում են նաև զուտ տեղական բնույթ ունեցող մի շարք պատճառներով, վոր բնութագրել ենք վերևը: Ռադիո-ցանցը մեղանում թույլ ե տարածված և վատ ե աշխատում, մեծ ընդ-հատուցներով, վոչ միայն այն պատճառով, վոր մեղա-նում քիչ մարտկոցներ կան, քիչ են տեխնիկները, ցածր վորակի չե ռադիո-ապարատուրան և այլն, այլ և զլխավորապես այն պատճառով, վոր աշխատանքի մասսայական ձևերի թերագնահատման ընդհանուր շղթայի մեջ, ռադիոն, իբրև այդ աշխատանքի ամենա-կատարելագործված ձևերից մեկը, թերագնահատվել ե նուշնպես: Այստեղ ևս, ինչպես և մասսայական աշխա-տանքի շատ ուրիշ ողակներում, **հարկավոր ե վճա-կան բեկում:**

Թատրոնական գործում թերութիւններն ընթա-նում են նուշն գծով: Յեթե Հայաստանի Պետթատրոնը կարելի չե ասել, վոր հիմնականում իր խնդիրն իրա-գործում ե, հիմնականում ձիշտ ե աշխատում, ապա նուշնը չի կարելի ասել մասսայական թատրոնի մասին: Ակումբայն բեմը, բեմադրութեան գործն առ-հասարակ, բանվորական թատրոնը, գյուղական թատ-րոնը մեղանում պարզապես գոյութիւն չունեն, չեթե, իհարկե, չհաշվենք այն անպետքութիւնը, վորի հետ մենք ամեն որ հանդիպում ենք: Մենակ Պետթատ-րոնով բավարարվել չի կարելի: Մեր կարիքները թե գյուղում և թե քաղաքում չափազանց բարձր են: Բանվորական ակումբը, գյուղական բեմը պետք ե ստանա անհրաժեշտ՝ իրեւորգիտապես կաշուն սնունդ:

Մենք չունենք մինչև այժմ կողմակերպված թյուր-  
քական թատրոն: Մինչդեռ այդ ուղղությամբ միջոց-  
ներ են նախատեսնված, իսկ այդ գումարները չեն  
ոգտագործվել:

Յերգերի և չերաժշտության տեսակետից մենք հետ  
ենք ֆեոճի ալեխի՝ քան բոլոր մյուս ասպարեզներում:  
Յես ել չեմ խոսում այն մասին, վոր մենք զանազան  
հեղափոխական տոնակատարությունների ժամանակ  
չենք կարող չերգել, վորովհետև չերգ չունենք: Մեզա-  
նում նույնիսկ հեղափոխական չերգերը չերգվում են  
դաշնակցական չեղանակներով: Այդ առանձնապես  
զգալի չե բանակի, կոմսոմոլի և պիոներների աշխա-  
տանքներում: Իսկ մեր քանդակագործությունը և  
գեղարվեստական արտադրությունների ուրիշ տեսակ-  
ները միթե տեղ գտել են մասսայական դաստիարակու-  
թյան գործում: Նույնպես վոչ: Մեր խրճիթ-ընթեր-  
ցարաններն ու ակումբները, ինչպես արդեն ասել  
ենք, նման են հավաքների: Նրանց արտաքին կահա-  
վորումը՝ կիսարձաններ, լոպոնգներ, պլակատներ,  
պատկերներ և այլն շատ անհոգ կերպով են կատար-  
վում, իսկ հաճախ ել բոլորովին բացակայում են: Այս  
բոլորը կատարվում է առանց հասկանալու լավ պլա-  
կատի, լավ նկարի ու լողունգի հսկայական դաստիա-  
րակչական, հեղափոխականացնող նշանակությունը:

Մեր զարգացման այժմյան հտապում, չերը ընդ-  
հանուր կուլտուրական աճումը պահանջում է մեզա-  
նից թե գեղարվեստական նկարներ, թե լավ քանդա-  
կագործական արտադրություն, պահանջում է չերա-  
ժշտություն—լավ համերգներ, մենք չենք կարող  
սահմանափակվել նրանով, ինչ վոր ունենք: Մեր

պահանջներն աճել են, մեր մասսան ուզում է չերա-  
ժշտություն, ուզում է չերգ, ուզում է նկար, պետք  
է կարենալ այդ բոլորը տալ մասսաներին և տալ վոչ  
թե պարզապես չերաժշտություն, պարզապես նկար,  
այլ հեղափոխական չերաժշտություն, հեղափոխական  
նկար, վորը մասսային հասկանալի չե, վորը վերցրած  
է նրա այսորվա ստեղծագործող կյանքից:

Հսկայական նշանակություն ունի մասսաների  
սոցիալիստական դաստիարակության գործում գեղար-  
վեստական գրականությունը:

Հայաստանի պրոլետգրողների ասոցիացիան  
արդեն ունի պրոլետպրոզների ամուր և հաստատուն  
կազմ, նա կատարում է մեծ ստեղծագործական աշ-  
խատանք բանվորների ու գյուղացիների շարքերից  
սկսնակ գրողների լայն կազմեր առաջ քաշելու և  
նրանց ոգնելու ասպարիզում: Մակայն կողմակերպու-  
թյան ուշադրությունը վերջին տարիներս համարյա  
շարունակ զբաղվել է ներքին խմբակային պայքարով:  
Այդ պայքարը հիմնականում առողջ չերեուլթ է չեղել,  
որն ողնել է կողմակերպության ամբապնդմանը, սա-  
կայն այդ պայքարը հայտնաբերել է նաև մի շարք  
թերություններ, վորոնց վրա պետք է կանգ առնել:  
Առաջինը քննադատության ծայրահեղությունները  
կամ քննադատության հենց մեթոդի թերություններն  
են: Բանն այն է, վոր գեղարվեստական ստեղծագոր-  
ծությունն ինքն ըստ ինքյան լինելով վերին աստի-  
ճանի բարդ գործ, պահանջում է իր նկատմամբ քննա-  
դատության ժամանակ մոտեցման ալեխի ճկուն ձևեր:  
մասնավանդ չեթե խոսքը չերիտասարդ գրողի մասին  
է: Գեղարվեստական գրվածքի իդեոլոգիական խեղա-

թյուրումները, իսկ չերբեմն ել խորթ ազդեցութեան միայն անորոշ հետքերը մեր պրոլետարիոսների շարքերում այնպիսի դաժան, վնաս միայն ըստ ելուցիան, այլև ըստ ձևի հակահարված ե ստացել, վոր հանցագործ գրողին հուսահատեցրել ե: Քննադատութեան նման ձևը կարող ե, իհարկե, գրողին հետ վանել, իսկ չերբեմն ել բոլորովին խեղդել նրա ստեղծագործութունը և միայն ամենահազվագուստ դեպքերում ոգնել նրան ուղղվելու: Իսկ մեր քննադատութունն, ինչպես և ուրիշ բնագավառներում, **իսկ այստեղ հասկապես**, պետք ե նպատակ դնի վոչ միայն սխալը մասսաների առաջ մերկացնելու, այլ պետք ե ոգնի սխալվող ընկերոջն իր սխալը գիտակցելու և այդ սխալն ուղղելու:

Համենայն դեպս գրական քննադատութեան գործը չափազանց կարևոր գործ ե, վորը, չեթե բոլոր մնացածը մի կողմ թողնենք, ահագին նշանակութուն ունի հենց գրողի հետագա ճակատագրի վրա, վորն այդ պատճառով ամենալուրջ ուշադրութուն ե պահանջում դեպի ինքը: Ահա թե ինչու այստեղ թույլատրելի չեն չափազանցումները և մանավանդ քաղաքացական չեզրակացութունները վորևե թույլ կազմված վոտանավորի տողի հիման վրա:

Սակայն հենց այստեղ իսկ պետք ե նշել, վոր պրոլետարիոսների քննադատութեան ուղղութունը միանգամայն ճիշտ ե և ուղիղ նշանին ե խփում, վորովհետև այժմ այստեղ ես, ինչպես և մեր շինարարութեան ուրիշ բնագավառներում, պետք ե հայտնաբերել և խփել աջ տրամադրութուններին:

Պետք ե նշել, վոր պրոլետարիոսների աստիճանի արդեն շատ չերկար ե զբաղվում իր «ներքին

գործերով»: Հայաստանում մենք ունենք տարրեր ուղղութեան գրողների մի բավական սովոր թիվ: Ստեղծված ե արդեն նաև գրողների ֆեդերացիա, իսկ աշխատանք, այնուամենայնիվ, դեռ չի չերևում: Այդ գրողների շարքերում կան մարդիկ, վորոնք կցանկանային մեզ ավելի մոտ լինել, կան մարդիկ, վորոնք անշուշտ մոտենում են, կա, իհարկե, և հազառակ չերևույթ. կարծես թե պրոլետարիոսների այդ բոլոր գործերում պետք ե ամենաեղանակաբար ղերը խոսող, սակայն նա այդ ասպարիզում դեռ քիչ ե չերևում:

Վերջապես պրոլետարիոսների մասին չեղած վերջին խնդիրն այդ աստիճանի անդամների ուսման խնդիրն ե: Այստեղ կարելի չե պարզորոշ կերպով հայտարարել, վոր բացի 2-3 ընկերից մնացած ընկերները չեն սովորում, իրենց վրա չեն աշխատում: Այստեղից մեզ սպառնում ե հետ մնալու լուրջ վտանգ: Այս խնդիրը պետք ե առաջադրել ամենայն վճականութեամբ:

### ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Վերջապես միքանի խոսք ել քաղուսաշխատանքի միքանի ձևերի մասին:

«Մենք չենք կարողանա կազմակերպել իդեոլոգիական ֆրոնտը, քանի դեռ պարզորոշ բեկում չենք առաջ բերել մեր մասսայական աշխատանքի կազմակերպման մեջ»:

Մեր մասսայական աշխատանքի հիմնական ձևն ե հանդիսանում անզրագիտութեան վերացման գործը, հետևալ ողակն ե հանդիսանում խրճիթ-ընթերցարանը:

Թե՛ անգրագիտութեան վերացման գծով և թե՛ մյուս բնագավառներում քաղցրուսաշխատանքը մեզանում խղճուկ դրութեան մեջ է գտնվում: Քաղցրուսաշխատանքը չի հանդիսանում մեզանում կոմունիզմի պրոպագանդայի պետական ուղղան, այլ աշխատում է դեպքից դեպք, սխտեմատիկ պրոպագանդա և ակտիվացիա չի մղում, անգրագիտութեան վերացումը մեզանում գրավում է յետին տեղը: Ամենաորոշելով պլանների համաձայն, համաձայն մեր բյուջետային հնարավորությունների, մենք կկարողանանք Հայաստանում վերացնել անգրագիտությունը միայն 1935—36 թվականին: Այդ, չես կասելի, կրիայի տեմպ է և յերեք չի կարող համապատասխանել այն խնդիրներին, վոր մենք ձեր առաջ դնում ենք: Բյուջետային հատկացումները քաղցրուսաշխատանքի համար մեզանում անչափ ցածր են: Այն սպեկուլյատիվ, չարչիական մոտեցումը, վորի մասին մենք խոսում ելինք մեր ամբողջ կուլտուրուսավորչական աշխատանքի առթիվ, առանձնապես ցայտուն կերպով է արտահայտվում մեր աշխատանքի այս բնագավառում: Գործկոմիների տեղական կազմակերպություններն այսպես են դատում. «ավելի լավ է մի խանութ շինել, կամ մայթը ուղղել, քան մի խրճիթ-ընթերցարան բանալ»: Այս չարչիական, սպեկուլյատիվ մոտեցումը քաղցրուսաշխատանքին վնաս է հասցնում մեզ, կասեցնում է մեր հարձակումն ընդդեմ թշնամի իդեոլոգիաների: Պետք է խփել այդպիսի տրամադրություններին, պետք է խփել «Ֆինֆոլկլոմատային» տրամադրություններին, չարչիական տրամադրություններին: Քաղցրուսաշխատանքը յերեք այդպիսի խնդիրների ծանրությունը մենակ չի

կարող տանել, չեթե մեր ամբողջ խորհրդային հասարակությունը վտառի չկանգնի այդ հսկայական խռնդիրները լուծելու համար: Տեղական աշխատողների խնդիրն է հանդիսանում կոտրել «գործկոմային» տրամադրությունը, բարձրացնել ստորին խավերի ընդհանուր ձեռներեցությունը, վտառի կանգնեցնել հասարակական կազմակերպությունները՝ անգրագիտութեան լիկվիդացիայի գործի համար պայքարելու: Վերջին ժամանակներս, կոմսոմոլի կազմակերպած կուլտուրալ կապակցություններ, կարծես թե վորոշ աշխատանք նշմարվում է, բացվել են լիկվյաններ, բաց կարելի է սպասել, վոր այսոր-վաղը այդ աշխատանքը կվիժի, վորովհետև մեր վառողը քիչ է, այսինքն մեզ պակասում է կուլտուրականություն, պակասում է յետադ: Պետք է պայքարել դրա դեմ, պետք է խանդավառություններ, յեռանդով վարակել բոլոր աշխատողներին, թե կուլտուրական, թե տնտեսական, և անգրագիտութեան վերացման գործը չտեսնված բարձրութեան հասցնել:

### ՄԱՐՔՍԻՉՄ-ԼԵՆԻՆԻՉՄԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Յեթե բուրժուազիան արվեստի ու գիտութեան բնագավառում, տնտեսութեան բնագավառում մեր դեմ համառ պայքար է մղում, չեթե բուրժուազիան թեորիայի ասպարիդում վորոշ բնագավառներում նույնիսկ իշխում է, ապա մենք չենք կարող մեր գիտական աշխատանքի ուժեղացման խնդիրը չդնել: Մենք հարձակում ենք կատարում ընդդեմ բուրժուազիայի վոր միայն տնտեսական ճակատում, այլև մենք կատարում ենք կուլտուրական հեղափոխություն, վորի հիմնական

ողակներէից մեկը պետք է հանդիսանա գիտութեան նվա-  
ճումը: Գիտական մարքսիստական մտքի զարգացման  
խնդիրը ներկա ժամանակաշրջանում խոշորագույն  
գործնական կարեւորութիւն է ստանում: Մի շարք օ-  
ռեղծվածներ, ինչպես մեր եկոնոմիկայի խնդիրները,  
մեր խորհրդային շինարարութեան խնդիրները, վար-  
կավորման, կապալավորձի հարաբերութիւնները, հո-  
ղային հարաբերութիւնները, մեր կոլտնտեսութիւն-  
ների ու խորհրդային տնտեսութիւնների եկոնոմիկա-  
յի, մեր իդեոլոգիական պայքարի, Անդրկովկասի պատ-  
մական անցյալի, Հայաստանի պատմութեան, Անդրը-  
կովկասի տնտեսական զարգացման պատմութեան խըն-  
դիրները և անցյալ կուլտուրայի այն խոշոր ժառան-  
գութիւնը, վոր մենք ունենք, այս բոլոր խնդիրները  
պահանջում են իրենց մարքսիստական լուծումը: Մենք  
պետք է պարզ կերպով գիտակցենք այդ անհրաժեշ-  
տութիւնը, վորովհետեւ մենք վնչ միայն առանց դրան,  
ինչպես հարկն է, չենք կարող առաջ մղել կուլտուրա-  
կան հեղափոխութեան գործը, այլև չենք հասնի մեր  
տնտեսական զարգացման անհրաժեշտ տեմպին: Գիտա-  
կան մտքի զարգացման կտրվածութիւնը սոցիալիս-  
տական շինարարութեան մեր անմիջական խնդիրնե-  
րից մենք այժմ ավելի քան չերբեքից եզրում ենք:  
Մենք այդ գգում ենք նրանով, վոր մինչև այժմ չենք  
կարողանում ճիշտ կազմակերպել թեկուզ հենց մեր  
կոլտնտեսութիւնների եկոնոմիկայի խնդիրը: Մենք  
այդ գգում ենք նաև նրանով, վոր մինչև այժմ ել չու-  
նենք Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատ-  
մութիւնը, գգում ենք այդ նաև նրանով, վոր չերի-  
տասարդութեան մեջ վարդան Մամիկոնյանի մասին

խոսում են իբրև ազգային հերոսի մասին, հիացմուն-  
քով են կարդում Ռաֆֆին և այլն, խոսում են հայ  
թագավորների մասին իբրև հերոսների, վորոնք փրկել  
են հայկական կուլտուրան, Հայաստանը և այլն: Հաս-  
կանալի չե, վոր չեթե մեր դպրոցներում չկան մարք-  
սիստական դասագրքեր, վորոնք հետադոտում են մեր  
պատմութիւնը, չեթե չկա դասագիրք Ֆեոդալական  
հին Հայաստանի մասին, չեթե չկա դասագիրք Անդրը-  
կովկասի եկոնոմիկայի, պատմութեան, հասարակական  
մտքի զարգացման մասին 19--20-րդ դարերում, ապա  
հասկանալի չե, վոր իրեն ժամանակին ազգային ոռ-  
մանտիղմի վորով մշակված նյութը հանդիսանում է  
միակ նյութը, վորով դաստիարակվում է թե կարմիր-  
բանակայինը, թե աշակերտը, թե ուսանողը: Ներկա  
պայմաններում, չերբ մենք դնում ենք նացիոնալիզմի  
դեմ սուր կերպով պայքարելու խնդիրը, առանց այդ  
նացիոնալիզմի գրական ստեղծագործութիւնների բա-  
վականաչափ խորը մարքսիստական քննադատութեան,  
դժվար է նրան հաղթահարել: Ահա այստեղ, այս կոնկ-  
րետ որինակի հիման վրա դժվար չե համոզվել, վոր  
գիտական մտքի զարգացման խնդիրն ընդհարվում է  
մեր կոնկրետ խնդիրների հետ: Նույնը կարելի չեր ա-  
սել նաև մեր շինարարութեան մյուս բոլոր բնագավառ-  
ների մասին: Գիտութեան կարիքն այժմ զգացվում է  
ավելի քան չերբեքից, և այդ միանգամայն բնական է,  
վորովհետեւ մենք անցել ենք մեր զարգացման ամենա-  
դժվար շրջանը, այն շրջանը, չերբ վերակառուցում ենք,  
վերափոխում ենք ինչպես մեր ամբողջ տնտեսութիւ-  
նը, այնպես և մարդկացի: Հայաստանում գիտական  
ուժեր քիչ են, բայց այդ չկա՞ծ ուժերն անասելի կեր-

պով ծանրաբեռնված են աշխատանքով: Այդ փոքր ռե-  
ժերով մենք պետք է ահագին գիտական գործ կատա-  
րենք:

Ահնրաժեշտ է զարգացնել գիտական ընկերու-  
թյունների կազմակերպությունը, անհրաժեշտ է կազ-  
մակերպել նոր կադրերի պատրաստությունը: Այդ տե-  
սակետից մենք կարող ենք Հայաստանում ստեղծել  
մարքսիստ-պատմաբանների, մարքսիստ տնտեսագետ-  
ների կազմակերպություններ, մենք այդ ուժերն ու-  
նենք: Այդ կազմակերպությունները վոչ միայն կարող  
եյին զբաղվել անմիջական հետազոտական աշխատան-  
քով, այլև կարող եյին կազմակերպել չեքիտասարդ  
սերունդների ուսումը, այն ընկերների, վորոնք հար-  
մարվել են գիտական աշխատանքի:

Գիտական աշխատողների նոր կադրերի առաջ-  
քաշման հիմնական ձևը՝ համալսարանական ասպիրան-  
տուրան մեղանում կազում է չեքիտ. գծով՝ նախ մենք  
մինչև այժմ ել նրանց միջև չունենք կուսընկերների  
բավականաչափ կադր: Մյուս կողմից ասպիրանտու-  
րայի թվում չեղած կուսակցականները ծանրաբեռնված  
են կուսակցական և այլ աշխատանքներով և հնարա-  
վորություն չունեն խորանալ գիտական աշխատանքի  
մեջ: Այդ ասպիրանտուրայի աշխատանքը վատ է դրված:  
Մեր ասպիրանտուրան չի կապված գիտական կազմա-  
կերպությունների զարգացման անմիջական խնդիրնե-  
րի հետ:

Այնուհետև, ընկերներ, մենք մինչև այժմ ել դեռ  
չունենք լայն մասսայական աշխատանք դեպի թեո-  
րիաները չեղած հետաքրքրությունը զարգացնելու աս-

պարիզում մեր կուսակցական, խորհրդային հասարա-  
կայնություն շարքերում:

Մինչև այժմ մեղանում հարկ չեղած բարձրություն  
վրա չի գրված այն դասախոսությունների աշխատան-  
քը, վորը լուսաբանում է թեորիայի դանագան բնա-  
գավանները: Չունենք մինչև անգամ թարգմանական  
գրականություն: Մինչև այժմ մենք չունենք Ենգելսի,  
Պլեխանովի հիմնական փիլիսոփայական աշխատանք-  
ները, չկան Մարքսի, Լենինի տնտեսական աշխատու-  
թյունները:

Պետք է լայն կերպով ծավալել մարքսիզմի, Լե-  
նինիզմի ուսումնասիրության գործը:

**ԿՈՍՄՈՍՏԱՎՈՐՈՒՅԱԾ ԽՅՈՒՐԵ.—** Խղեղովիական  
Ֆրոնտը ձիշտ կերպով կազմակերպված կլինի միայն  
այն ժամանակ, չեք կուսակցությունը կկարողանա իր  
անդամների քաղաքական մակարդակը հարկ չեղած  
բարձրության հասցնել, չեք մենք այնպիսի դրություն  
ձեռք կբերենք, վոր ամեն մի կուսակցական ամենից  
առաջ տեսությունը կզբաղվի և չի լինի այնպիսի կու-  
սակցական, վորը մի ամբողջ գլուխ բարձր չլինի ան-  
կուսակցական բանվորից ու գյուղացուց: Այդ խնդիրը  
պետք է զրվի մեր կուսակցական պրոպագանդայի հիմ-  
քում: Մենք մինչև այժմ ել ունենք կուսակցական  
մասսաների չափազանց ցած մակարդակ: Մենք մինչև  
այժմ ել ունենք, ասենք, այնպիսի դրություն, չեք  
մեր մի շարք գյուղական կազմակերպություններ նույ-  
նիսկ չեն կողմնորոշվել մեր կուսակցության արդի քա-  
ղաքականության խնդիրներում: Մենք մինչև այժմ ել  
այնպիսի դրություն ունենք, չեք կուսակցականները  
չեն կարողում «Պրավդան», չեն կարողում «Սորհրդային

Հայաստանը», ծանոթ չեն մեր կուսակցություն առորչա կյանքի հետ: Լինում են այնպիսի կուսակցականներ, վորոնք ընդհանրապես չերբեք և վոչինչ չեն կարդում, լինում են նաև այնպիսի կուսակցականներ, վորոնք ընդհանրապես չեն հետևում կուսակցական կյանքին: Կան այնպիսի կուսակցականներ, վորոնք միանգամայն անփութ են թեորիայի խնդիրներին կատամամբ և այդ անփութությունը հաշվում են «պրոլետարական կալունություն» նշան:

Անհրաժեշտ է մեր կազմակերպությունների տրամադրություն մեջ խորը բեկում առաջ բերել քաղաքական ուսման նկատմամբ: Անհրաժեշտ է ուժեղացնել կուսակցություն ուղղորդությունը դեպի կուսակցականների լուսավորություն կազմակերպման գործը, լայն կերպով ծավալել խմբակներ կազմակերպելու գործը, խմբակներ, վորոնց նպատակն է իրենց ուղիղ գծի միջոցով կուսակցական մասսան կողմնորոշել մեր կուսակցություն ընթացիկ քաղաքականության մեջ: Մեր կուսակցական ակտիվի գծով ծավալել Մարքսի և Լենինի աշխատությունների խմբակներ: Ընդլայնել տեսական հարցերի, դիալեկտիկական մատերիալիզմի, մեր կյանքի առանձին խնդիրների, մեր շինարարության առանձին խնդիրների ուսումնասիրության աշխատանքը: Պետք է լայն կերպով ծավալել դասախոսական աշխատանքը, վորը հետապնդում է վոչ միայն լայն խավերի քաղաքական և կուլտուրական լուսավորության խնդիրները, այլ նպատակ է դնում հետաքրքրություն դարձեցնել դեպի գիտական աշխատանքը մասսաների մեջ: Հարկավոր է ընդլայնել մեր կուսակցականների ինքնա-

գարգացման աշխատանքը, մի շարք ձեռնարկումներ մշակել, վորոնք կարողանալին ազատել մանր հոգսերից, ավելորդ ձգձգումներից, հաստատ և անշեղ անցկացնել «վոչ մի կուսակցական չպիտի լինի առանց տեսական ուսման» լոզունգը: Վերին աստիճանի մեծ և պատասխանատու խնդիր: Մենք պետք է բարձրացնենք և հարկավոր բարձրություն վրա դնենք հարվածային կարգով կուսլուսավորությունը, վորովհետև չեթե կուսակցությունը, կուսակցական շարքերը չեսինան, առջևից չընթանան, ապա պարզ է, վոր իդեոլոգիական ճակատի կազմակերպումը բոլոր ուղղություններով կարող է մեզ չհաջողվել: Մենք պետք է ձգենք բոլոր շարժափոկերը, խողովակները, կոմսոմոլը, պրոֆմիությունը և ուժեղացնենք կուսակցության դեկավարությունը: Պետք է այնպիսի դրություն ձեռք բերել, վորպեսզի ակտիվորոշվեն տեղերում և կենտրոնում իսկապես վոր դառնան չերկրի ամբողջ կուլտուրական աշխատանքի կենտրոնը: Պետք է այնպիսի դրություն ձեռք բերել, վորպեսզի մեր ագիտպրոպագանդները տեղյակ լինեն չերկրի բոլոր կուլտուրական հիմնարկների բոլոր պլաններին ու ձեռնարկումներին: Միայն այն ժամանակ կարող է ապահովվել պլանի միասնականությունը, հարձակման միասնականությունը աշխատանքի տարբեր ձևերի պայմաններում:

Այս բազմակողմանի խնդիրների հետ սերտ կապված նշվում է նաև մեր մամուլի տեղը:

**Մամուլ.**— Մենք մեր պրոպագանդայի, ագիտացիայի և կուլտուրական շինարարություն ասպարիզում չեղած խնդիրների համեմատ ել պետք է գծենք մա-

մուլի առաջ դրվող մեր պատվերները: Յեթև մենք այդ մամուլը կոպիտ գծերով բաժանենք 3 մասի՝ գիտական-գրական, կուս-դեկավարող ու գերատեսչական և վերջապես մասսայական մամուլ, ապա պետք է ա-սենք, վոր վերջինս հենց գտնվում է ամենավողբալի դրուժյան մեջ: Մեզանում հանրամատչելի լեզվով, բանվորների ու գյուղացիների համար բըրջուր գրելը վերավորանք են համարում: Վոչ վոք այդ գործով չի ուզում զբաղվել: Ընդհակառակը՝ բոլորն էլ ուզում են խելքին զոռ տալ, հողվածներ ու աշխատություններ գրել, վորոնք անպայման «բարձր վոճով» լինեն:

Մասսայական գրականությունից, չեթե դեն ձգենք միայն «Մաճկալը», վորը քիչ թե շատ կատարում է այդ, դեն ձգենք մի չերկու ամսագիր, վորոնք չափազանց ուշանում են նույնիսկ մարտական լրզունգների տեսակետից—բոլոր մնացածը դեռ գտնվում է իր զարգացման չափազանց նախնական տատիճանի վրա:

Մենք համարյա վոչ մի աշխատանք չենք տարել ընթերցողի հետ, բանթղթակցի, գյուղթղթակցի հետ, նրանց քիչ ենք ընդգրկում մեր անմենուրյա թերությունների, բյուրոկրատիզմի, ձգձգումների և խորհրդային ապարատի այլ խեղաթյուրումների դեմ մղվող պայքարով: Այստեղ ևս հարկավոր է լուրջ բեկում: «Ինտելիգենտական վերամբարձությունից մեր մասսայական մամուլը պետք է հրաժարվի: Աշխատանքը պետք է այնպես կազմակերպել, վորպեսզի մեր չուրաքանչյուր մարտական կամպանիային, մեր ամեն մի շրջադարձին ուղեկցի մասսայական հանրամատչելի գրականության մի ամբողջ հեղեղ, վորը կարելի լինի ծախել ամենացածր գներով: Մենք այդպիսով այստեղ ևս հա-

վատարիմ ենք մնացել այն հիմնական դրուժյանը, հիմնական թերություններին, վորոնց մասին չես խոսել էմ: Իս աշխատանքի վորոշ կղզիացումն է, բյուրոկրատությունն է: Այդպես կարելի չի միայն բացատրել այն, վոր մենք մինչև այժմ Հայաստանում չենք կարողացել մասսայական գրականություն ստեղծել:

\*  
\*\*

Այդպես, ուրեմն, վորն է մեր աշխատանքի հիմնական թերությունը, վոր ողակից պետք է բռնել, վորպեսզի իրոք վոր բեկում ստեղծվի:

Հիմնական թերությունը, հիմնական ուղտկը այդ այն է, վոր բացակայում է խոհուն և հաջորդական կապ սոցիալիստական շինարարության տեական և չուրաքանչյուր առանձին դեպքում ընթացիկ խնդիրների և պրոպագանդայի, ագիտացիայի ու կուլտուրական շինարարության ամբողջ լայն գործի միջև: Այդ հիման վրա չել ստացվել է մեր աշխատանքի առանձին ողակների կտրվածություն, թուլացել է մեր շինարարության բոլոր տեսակների միասնականությունը, բթացել, իսկ չերբեմն էլ բոլորովին չքացել է մեր աշխատանքի այս կամ այն ձևի սրությունն ու վորոշակիությունը: Իսկ այստեղից էլ առաջացել են թեքումներ և նրանցից հիմնականը՝ մասսագերի մեջ տարվող աշխատանքի քերականացում:

Անհրաժեշտ բեկումը, վորի առաջ գալն արդեն նկատվում է, բնական է, առաջին հերթին պետք է գնա այս խզված կապերը վերականգնելու գծով, մեր աշխատանքի բոլոր ձևերի բովանդակության իսկական միասնականություն ստեղծելու գծով, իր ճյուղում սո-

ցիալիստական շինարարութեան ընդհանուր և ամեն մի ալլալ հտապում միանգամայն կոնկրետ խնդիրները խոհուն մշակման և գործնական լուծման գծով:

Կոնկրետ կերպով մեր զարգացման այժմյան ժամանակաշրջանում, չերբ գյուղացիութեան հետ «գողվելու» պրոբլեմը պետք է լուծել կուլակի դեմ ուժեղ հարձակում կատարելով, հիմք ունենալով չերկրի ինդուստրիացման և գյուղատնտեսութեան կոլեկտիվացման բարձր տեմպը, մեր լուսավորութեան բոլոր ողակները, մեր ազիտացիայի ու պրոպագանդայի բոլոր տեսակները, ինչպես և մեր բոլոր մյուս մարմինները, ստանում են միանգամայն կոնկրետ խնդիրներ իրենց ճշուդերում: Այս շրջանի ամբողջական ընդհանուր խնդիրը լուծվում է վոչ միայն այս կամ այն խորհրդային, պրոֆեսիոնալ կամ կուսակցական ապարտի կողմից, այլ բոլոր ապարտները, մեր բոլոր ողակների կողմից միատեղ, իհարկե, պահպանելով վորոշ «աշխատանքի բաշխում» առանձին ողակների միջև:

Հասունութեան քննութուն կարող է տալ այժմ այն խրճիթ-ընթերցարանը, վորը կարողացել է կազմակերպել գյուղացիական ակտիվը սոցիալիստական շինարարութեան հրատապ խնդիրների շուրջը գյուղում. այն խրճիթը, վորն իր կուլտուրական աշխատանքով չքավորութեան և միջակների միջև, կարողացել է ոգնել նրանց բերքատվութունը բարձրացնելու գործում, նրանց տնտեսութունը կոլեկտիվացնելու գործում և այլն. վերջապես այն խրճիթը, վորը կարողացել է իր ամենուրեւ աշխատանքի ընթացքում նպաստել չքավորութեան և բատրակութեան դասակարգային ինքնագիտակցութեանը, կարողացել է կազմակերպված կեր-

պով մասնակցել կուլակների դեմ մղվող պայքարին և այլն:

Ճիշտ նույն կերպ հասունութեան քննութուն կարող է տալ այնպիսի դպրոցը, վորը մեր կարիքների համաձայն կկարողանա վերակառուցվել և ամենալավ ձևով պատրաստել պահանջվող աշխատողների կադրեր:

Հարցը հետևարար այն է, վոր մեր ամեն մի մարմին բավականաչափ քաղաքականապես հասուն լինի, բավականաչափ ճկուն կառուցված լինի, վորպեսզի կարողանա ժամանակին շարափոխվել, վորպեսզի հետ չմնա, այլ կատարի այն, ինչ վոր պահանջում է հեղափոխութունը:

Սրա գլխավոր և հիմնական պայմանն է հանդիսանում մի կողմից կուսակալարութեան ապահովումը և մյուս կողմից լայն ծավալված ինքնաքննադատութունը մեր աշխատանքի բոլոր բնագավառներում, վորը թույլ չի տա վոսկրանալ և վճռական կերպով կվերացնի բյուրոկրատիզմի տարրերը, մշտապես առաջ կբշի յետ մնացողներին, կստիպի իրոք կատարել նրանց վրա դրած պարտականութունները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՑՈՒՆ

ԵՂ

<b>Առաջաբան</b>	3
<b>I. Յեկակեսային գիրավորում</b>	12
Այժմյան եապարի առանձնահատկությունները	16
Աշխատանքի ընդ որ ձևերի և մեթոդների մաք- սիմալ միասնականությունը	22
Կազմակերպչական սկզբունքներ	24
<b>II. Ո՛ւր յեվ ի՞նչպես ուղղել հարվածները</b>	27
Բյուրոկրատիզմը կուլտաշխատանքի մեջ	31
Նացիոնալիզմ	34
Ինչպես պետք է կռվել նացիոնալիզմի դեմ	36
<b>III. ՄԵՐ աշխատանքի կարեվորագույն որակները</b>	
(եքսկուրսիաներ, դպրոց)	44
Մասսայական ագիտացիայի ուրիշ տեսակներ (կինո, ռադիո, թատրոն, չերափշտություն, գեղարվեստական գրականություն)	50
Անգրագիտության վերացումը	57
Մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդի խնդիր- ներ (գիտական աշխատանք, կուսուլուսավո- րություն, մամուլ)	59

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

Գրադարան

ՀՀ Ազգային գրադարան

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ  
ՀՀ Ազգային գրադարանի կազմակերպմամբ

ՀՀ Ազգային գրադարան



NL0218977

44. 428

1620

Аматуни.  
Задачи агитации,  
пропаганды и  
культурного строительства.



ԳՆԵՐ 20 ԿՈՊ.